№ 3 (181) XVII ՏԱՐԻ ՄԱՐՏ 1907

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

ՆՈՐ ՏԱԳՆԱՊԸ

Այս անգամ եաթաղանների ու սւիններեր ոյժը չէ որ գալիս է նօսրացնելու հայ ժողովուրդը իր բնիկ աշխարհում, ոչ, այլ մի ուրիշ աւելի կատաղի, աւելի արմատական միջոց—տնտեսական քայքայիչ ոյժը և նրա անմիջական հետեւանք՝ սովն ու խելակորոյս գաղթը։

Աղէկտուր ձայները մի-մի կտոր թղթի վրայ արձանագրուած շտապ-շտապ մեզ են հասնում։ Թիւրքական սև բէժիմի ներկայացուցիչները, լցուած հայաքնակ գաւառները, ապշեցնող վայրագութիւնով գրաւում են ամեն ինչ՝ տուրքերը լրացնելու համար, և այդ անւան տակ ամեն տեսակ ոճիր, բռնութիւն, հարստահարութիւն՝ սովորականի կարգն անցած՝ գործ են դրւում անազմուկ, առանց որևէ դիմադրութեան։

Ու անզէն հայ գիւղացին սովից և հալածանքից սարսափած՝ լաւ է համարում թողնել իր հողն ու տունը և փախչել առանց յետ նայելու, այլևս չը տեսնելու համար այն զուլում աշխարհը, ուր նա պատրաստ էր տալ ամեն ինչ, և գոյք և կեանք, բայց ոչ երբէք իր պատիւը։

„Պիտի ծախէք ձեր կնկան, աղջկան ու հարսին պատիւը՝ վճարելու համար տուրքը",—գոռում է վէրկիմէժուրին։ Եւ հայ ժողովրդի նահապետական ոգին ընկճուած այդ սպառնալիքի տակ՝ այլևս երկար մտածելու ժամանակ չի տալիս և նրան խելացնոր դարձնելով՝ հալածում է գաւառից գաւառ, նահանգից նահանգ, որպէսզի նա իր ծանրացած ու յոգնած գլուխը դնէ այն քարի, այն թուփի վրայ, ուր այդ խօսքերի արձագանքները հասնել չեն կարող։

Թիւրք շարժման ահռելի ուրուականը գիշեր ցերեկ զարկում է Եըլդըզի դուռը և Կարմիր Գազանին ամայ կերպով ծրագիրներ կազմել տալիս։ Եւ մինչ հայ տառապող ժողովուրդը հիացած հայեացքով էր դիտում թիւրք ըմբոստացումը ու դրա տակ ինչ-ինչ փայլուն հեռանկարներ որոնում գալիք օրւայ համար, այժմ արդէն համոզւում է, որ այդ շարժման ամենափոքրիկ մի ակտը ահագին պատասխանատուութեամբ ծանրանում է իր գլխին։ Էրզրումի թիւրք ժողովուրդը մերժում է տալ Շախսի վէրկիսին, իսկ կառավարութիւնը չի յանդգնում միջոցների դիմել ըմբոստացողների դէմ՝ լաւ զգալով դրա հետեւանք անախորժութիւնները. դրա փոխարէն շրջակայ բոլոր հայ գիւղերի տուրքը 60 տոկոս աւելորդով է հաւաքում, և դա՝ զինւորների ստոր ու անբարոյական բնազդների ոյժով, այն թիւրք զինւորների, որոնք ամիսներ առաջ այնչափ վեհօրէն և այնչափ գովելի ընթացքով մերժեցին զէնքը դարձնել իրենց հաւատակիցների դէմ, երբ սրանք պաշտօնեաներին ոտքի տակ առած՝ Լինչի օրէնքն էին գործ դնում։

Ապագայ որևէ բարդութիւնից խուսափելու և մանաւանդ մի գեղեցիկ օր թիւրք ու հայ տարրը իր դէմ միացած տեսնելու դժւար կացութիւնից զերծ լինելու համար, Համիդը դէպի թիւրքերի շարժումը ամենանեղողամիտ և քնքոյշ վերաբերմունքն է ցոյց տալիս, այն ինչ միւս կողմից ամէն ջանք գործ է դնում հայ ըստւար գիւղերը քայքայել և նոյնիսկ դիւրութիւններ տալ բնակիչներին ցրւելու ամենուրեք, ուր ուզեն, բայց ոչ երբէք հայկական գաւառները։ Ասազակաբարոյ և վայրենի հակումն ունեցող պաշտօնեաներին ու վէրկիճիներին թոյլ է տրւում ամեն տեսակ վիրաւորանք հասցնել հայ ընտանիքներին, որով երկու ցեղերի մէջ եղած վիհը, որ վերջերս լցւել սկսած էր, է՛լ աւելի լայնանայ, և որևէ բարեկամական յարաբերութիւն անկարելի դառնայ։

Եւ թիւրք „ջան վէրանը" տեսնում է այդ բոլորը ու „վեհանձնօրէն" լռում։ Նա մի թիւրքի բանտարկութեան դէպքում վազում է դէպի վալիի պալատը ու կտրուկ պահանջներ դնում, իսկ հայ աղջիկների բռնաբարումների, հարիւրաւոր բանտարկութիւնների դէմ խօսքով անգամ չէ բողոքում։

Ինչո՞վ բացատրել այս թիւրիմացութիւնը։ Եթէ թիւրք շարժումը հետեւանք է ազատասիրական որևէ տրամադրութեան, մենք կանգնած չը պիտի լինէինք մի դրութեան հանդէպ, որ ծայրահեղութիւններ է ներկայացնում երկու տարբեր ցեղերի նկատմամբ—դէպի մէկը անսահման ներողամտութիւն, իսկ դէպի միւսը անպատմելի հալածանք։ Ո՞ւր է առողջ տրամաբանութիւնը թիւրք յեղափոխականի մէջ. մի՞թէ նա մտածում է թէ հայերի իրաւունքները պաշտպանելով՝ կը կորցնէ իր արդար պահանջների ոյժը։ Մի՞թէ նա մոռանում է, թէ հայկական ընդհանուր դժգո-

հութիւնները այն հեռաւոր ջահերն էին, որոնք 15—20 տարուց իվեր հեռւից հեռու լուսաւորում էին թիւրք խարխափող ամբոխին, տեսնելու ու տնտղելու համար իր ապագայ ընդվզող քայլերը։ Թերևս նա մըտածում է, թէ հայը մի արհամարհելի ոյժ է, որ ոչինչ չը պիտի կարողանայ աւելացնել թիւրք ըմբոստացող տրամադրութեան վրայ։

Այո, թիւրք շարժուող տարրը դէպի հայն ունեցած իր անտարբեր վերաբերմունքով ծանր ու անմեկնելի խորհրդածութիւնների առիթ է ներկայացնում։ Զգալով թէ ինքը հետզհետէ հեղինակաւոր է դառնում իր ժողովրդի մէջ, նա մեծ յանցանք գործած կը լինի, եթէ իր բողոքը սահմանափակէ միմիայն Շ ա խ ս ի վ է ր կ ի ս ի ն չը վճարել տալու փոքրիկ յաղթանակով, երբ միւս կողմը այդ տուրքի կրկնապատիկը ստացուում է հայ գիւղացուց։ Թող նա չը մոռանայ, որ բոլոր ազատութիւնների աղբիւրները իրենց կաթիլները ստանում են մարդկային վեհ գաղափարների ու լուսաւոր մտքերի ցոլքերից և ոչ երբէք կրօնական ֆանատիկ դօգմերից։ Թող նա չը մոռանայ միևնոյն ժամանակ, թէ թիւրք կառավարութիւնը հայկական ամէն ոյժ, ամէն ճիգ խեղդելուց, մահացնելուց յետոյ, իր ամբողջ թափը պիտի դարձնէ թիւրքական շարժման դէմ և, մի քանի աջող հարուածներից յետոյ, թիւրքիայի ազատ մտածողների ամբողջ ձգտումն ու վերածնութեան գործը տասնեակ տարիներով պիտի յետաձգէ։ Թիւրք լուսամիտ մասը դեռ չը կարողացաւ ներշնչել իր ամբոխի մէջ գիտակցութիւն դէպի իր դրութիւնը, որ անքակտելի կերպով կապուած է իր դրացու դրութեանը. նա միշտ էլ մոռացաւ կամ թերացաւ շեշտել հայ տարրի խաղացած կարևոր դերը թիւրք յեղափոխական-ազատագրական գործում, և հէնց այդ պատճառով էլ թիւրք ամբոխի մտածմունքի մէջ տիրում է մի բաց, որ դեռ երկար ժամանակ կը մնայ մի անգոյն գիծ նրա բոլոր ձեռնարկութիւններում։ Այդ պակասի հետևանքը այսօր զգալի կերպով ծանրանում է հայ ժողովրդի ուսերին, որը խոստովանել այժմ դժուար է թիւրք ժողովրդի համար, բայց նա կը խոստովանի շուտով, երբ մտրիկ ապագայում, իր պակասի հետևանքը կը զգայ ծանրացած իր ուսերի վրայ, երբ նա իրեն մեն-մենակ կը գտնի թիւրք բռնապետութեան հանդէպ։

Իսկ դա գործի համար կը լինի չափազանց անօգուտ և ուշացած մի դառն զղջում։

ՀԱՅ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Նամակ „Դրօշակին“

Գէշ ժամեր կան որոնց միջոցին ամենէն սրտոտ մարդիկ անգամ կը փորձուին տեղի տալ վհատութեան, յուսահատութեան և փուճ զայրոյթին և երբ սովորականէն աւելի կը գրգռուին այն անհամեմատութենէն որ գոյութիւն ունի իրենց կամքին և կարողութեան միջև։ Այդ օրինակ ժամերուն մէջ ես չեմ գտներ աւելի վշտալի բոպէ մը քան այն՝ երբ մեզի կը հասնին պաղատական ու խղդուկ ձայները մեր ընկերներուն, որոնք ամրափակուած են Մուշի Վանի, Աքեայի և Պօտրումի մէջ և այն ամէն տեղերը՝ ուր սուլթանին հրամանով հայերը, մինչև իսկ երբեմն առանց դատելու, կ'ենթարկուին համիդեան տանջարաններու ահռելի ռէժիմին։

Մենք շատ լաւ գիտենք թէ այդ կալանաւորները ֆիզիքական և բարոյական ի՞նչ տառապանքներու ենթարկուած են, որչափ ալ անոնք, յաճախ, վեհ հպարտութիւնով մը չեն ուզեր տրտունջներ ընել։

Գիտենք թէ անոնք, առանց զէնքի, իրենց բանտակից ունին քիւրդեր, զեյպէկներ, թիւրքեր, որոնց թոյլ կուտայ բանտի տեսչութիւնը զէնքեր կրել, որպէսզի եթէ կռիւ մը պատահի կամ եթէ ինքը ուզէ այդ տեսակ բան մը յառաջ բերել, հայը ի վիճակի չըլլալով ինքզինքը պաշտպանելու, անպատճառ զոհ ըլլայ և առնուազն ծանրապէս վիրաւորի։

Գիտենք թէ այն շատ նեղ բանտերը ուր կը դիզին և կը փտտին հարիւրաւոր դժբախտներ, ժանտախտի և վարակման բոյներ են, գիտենք թէ թոքախտը և մտաւորական խանգարումը կը սպառնան անոնց, որոնց խնայած է ոճրագործներու դաշոյնը և որոնք կրցած են դիմադրել անօթութեան և չարչարանքներու։

Գիտենք թէ քաղաքական կալանաւորներէն շատերը բանտարկութեան չէ՛ որ դատապարտուած են՝ այլ բերդաքաղաքի մը մէջ աքսորի, ինչ որ համեմատաբար զանազան ազատութիւններ կուտայ իրենց։ Այսպէսով անոնց տառապանքը խստօրէն ծանրացած է կայսերական չարաշուք քըմահաճոյքի մը համաձայն։

Այս բոլորը գիտենք, աւա՜ղ, և եւրոպական կառավարութեանց կողմէ քանիցս փորձեր կատարուեցան հայ քաղաքական բանտարկեալներու վիճակին մէջ բարւոքում մը մտցնելու համար։ Ո՛չ մեծ կոտորածներէն առաջ Անգլիոյ կողմէն կատարուած քննութիւնը, ո՛չ ալ անկից ի վեր Ֆրանսական կառավարութեան ներկայացուցիչներուն կողմէ եղած մասնաւոր դիմումները չը կրցան իրապէս փոփոխել ինչպէս որ պէտք էր, համիդական գեհենը, քանի որ թէ բարելաւումի և թէ ընդհանուր ներումի մասին գրուած բոլոր խոստումներն ալ Ն. Կ. Վ. Ապտ-իւլ-Համիդի բոլոր խոստումներուն պէս դրժուեցան։ Առաւաւելն երբեմն կարելի եղաւ կանխամտածուած դատական սճիրներու առաջքը առնել, ինչպէս բրաւ պ. Էմիլ Կօմպ, Անատոլ Ֆրանսի գրդումին վրայ, 1904-ի գարնան, Վարդգէսի գլխատումը արգիլելով։

Բայց քաղաքական բանտարկեալներէն մեծագոյն մասին համար միակ յոյսը որ կայ թիւրքիոյ և Ռուսիոյ մէջ՝ իրենց արդի կացութեան ընդհանուր փոփոխման մէջն է։ Եւ ազատ օդի մէջ շրջագայող ազատ մարդոց՝ տարիներով-տարիներով զնդաններու մէջ տառապողներուն խրատներ տալու յանդգնութիւնը որքան որ ալ տարօրինակ թւի, թող թոյլ տուի նորէն մեզի մեր ընկերներուն ուղղել մխիթարութեան ու քաջալերութեան քանի մը խօսքեր։

Նախ պէտք է լաւ գիտնան անոնք թէ մենք մոռցած չենք զիրենք և երբ „Մենք“ կ'ըսեմ, կը հասկնամ Ֆրանսացիները և Եւրոպայի ուրիշ ռամկավար ազգերու այն քա-

զաքայլները, որոնք չեն կրնար առանց ամօթի մոռնալ իրենց կառավարութեանց թերացումներուն և առանց դառն վշտի՝ իրենց անհատական անկարողութեան։ Եւ սակայն, ինչ որ կարելի է ընել, ըրինք և պիտի ընենք տակաւին մեր կարողութեան ներած չափով և անմիջապէս՝ դարման մը տանելու համար մեր ականջին հասնող վատագոյն սարսափներուն։

Այնուհետև և մանաւանդ պէտք էր որ, յամառօրէն դիմադրեն անոնք վհատութեան ազէտալի թելադրանքներուն և պէտք է որ չիյնան յուսահատութեան խաւարչտին համակերպումին մէջ։ Պիէռ Կրապօտկին կը պատմէ իր կեանքին Ցիշատակներուն մէջ թէ երբ 1874-ին բանտարկեցաւ Պետրոպաւլովեան դժնեայ բերդին մէջ, „որուն տարեգրութիւնները մարդասպանութեան ու չարչարանքի տարեգրութիւններ են, լի՝ խոնաւ և մութ նկուղներու կղզիացման մէջ մոախանգարումի կամ յամր մահուան դատապարտուած և կենդանի գերեզմանուած մարդերու պատմութիւններով“, ինքզինքին ըրած է այն միևնոյն խոստումը զոր Բակունին ինքնիրեն ըրած էր և այսպէսով ուրախամեայ բերդարգելութենէն յետոյ աւելի զօրեղ մնացած, քան իր ազատ ընկերները.—„Անիկա հանդուրժեց այս կեանքին, կ'ըսէի ես ինծի, պէտք է որ ես ալ հանդուրժեմ. ես չեմ ուզեր այստեղ մեռնիլ“։ Եւ իրեն համար ապրելու կանոն մը որոշեց, ինքզինքը տալով ամենօրեայ մարմնամարզի մը իր ֆիզիքական այժը պահպանելու համար խորքը այն գերեզմանին, ուր ողջ ողջ թաղուած էր երկար տարիներու համար։

Մեռնիլ չէր ուզեր. ապրեցաւ, խոյս տուաւ, կը շարունակէ մարանչիլ մարդկութեան լաւագոյն ապագային համար։

Պէտք է որ մեր ընկերներն ալ Կրապօտկինի նման չը յուժարին մեռնիլ։ Իրենց կեանքերը շատ ու շա՜տ թանկագին են, ոչ թէ միայն իրենց համար, այլ իրենց բովանդակ ժողովուրդին համար, որուն կորովի օրինակ մը պէտք է տան՝ օրինակ մը՝ աւելի հերոսական քան այն՝ զոր կուտայ արեգակին գեղեցիկ լոյսին տակ կուռելով ինկող ֆեդային։ Թո՛ղ ունենան պէտք եղածին չափ բարոյական այժ՝ սպասելու համար մինչև ազատման ժամը։

Եւ այդ ժամը մօտ է. Թիւրքիոյ և Ռուսիոյ մէջ բռնակալութեան և ինքնակալութեան վայրկեանները հաշուած են։ Բայց ոչ սուլթանին անհետացումը, ոչ ալ Ռուսիոյ քաղաքական յեղափոխութիւնը պիտի չը կրնան վերջ մը դնել գործունէութեանը անոնց, որոնք կանխաւ պայքարեցան ու տառապեցան։

Առաջին քայլը ընելէն յետոյ կը մնան ուրիշ յառաջադիմութիւններ, զոր պէտք է որոշագրել և ձեռք ձգել, և երբ իրենց քարէ բանտէն դուրս ելլեն, մեր ընկերներուն ազատումը վերջնական եղած պիտի չըլլայ տակաւին. անոնք դեռ պիտի աշխատին իրենց ժողովուրդին հետ փրկուելու համար այն դարաւոր շղթաներէն, որոնք կը ծանրանան նահատակ Հայաստանին վրայ։ Անոնք պիտի խորտակեն մէկիկ-մէկիկ այդ շղթային կարծր օղակները.—թշառութիւնը, տգիտութիւնը և իշխանութեան սարսափը։

Անոնք Ղազարոսի նման յարութիւն պիտի առնեն ոչ թէ այնուհետև հանդիստի և անդորրութեան մէջ ամուլ կեանք մը վարելու, այլ դարձեալ պայքարելու համար իրենց բարեկամներուն, հայրենակիցներուն հետ և ի միասին եւրոպացի ու ամերիկացի այն անձերուն՝ որոնք անոնց եղբայրացան իրենց դատին ու հերոսութեան հանդէպ զգացած համակրութեան և սքանչացումին ազդեցութեան տակ։

Եւ ճիշտ ատոնցմէ մէկն է, ամէնէն տրտումը՝ անոնց փրկութեան համար աւելի զօրաւոր չը կրնալ ըլլալուն համար, բայց ոչ ամենէն նուազ հաւատարիմը, որ կը պաղատի իրենց որ չընկրկին յուսահատութեան առջև, որ յարատևեն ապրիլ և ինքզինքնին պահպանեն նորանոր պայքարներու։

14 Մարս. 1907
ՊԱՐԻԶ

ՊԻԷՌ ՔԻՑԱՌ

„ԴՐՕՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
(ՈՒՂԱՐԿԻԱԾ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ)

ԹԻՖԼԻԶ, 5 մարտ

Հայկական գաւառներէն հասնող վերջին լուրերը շատ ողբերգական պատկեր կուտան այնտեղի վիճակի մասին։ Բաղէշ-Մուշի շրջանը կատարեալ դժոխք է. Մշոյ դաշտի մէջ թիւրք կառավարութիւնը բռնի և խաբեբայական ամեն միջոց ու հնար կը գործածէ ժողովուրդը գաղթել տալու համար, որոնց հողին վրայ անմիջապէս կը հաստատէ իսլամ գաղթականներ։ Ցուսահատած ժողովուրդը կը փախչի դէպի Դիարբէքիրի և Հալէպի կողմերը։ Էրզրումի նահանգի հայ գիւղերու վիճակը նոյնպէս անտանելի է։ Սովորական դարձեր է հայ կոյսեր փախցնել և բռնի իսլամացնել։ Վանի նոր կուսակալը նոյն տմարդի միջոցներուն կը հետևի։ Կամայական և անհատնում տուրքեր ամենայն խստութեամբ կը հաւաքին։

ԵՐԿՐՈՐԴ ԴՈՒՄԱՆ

Ռուսաստանից հասնող վերջին հեռագիրները հաղորդում են, թէ կառավարական շրջաններում արդէն, իբրև վերջնական որոշում, վճռուած է ցրել Դուման ամեն պարագայի տակ, և որպէս թէ դա պիտի լինի շատ շուտ, Նոյնիսկ Տաւրիկեան պալատում առաջին յանդուգն ճառը արտասանելուց էլ առաջ։ Դա, իհարկէ, ծայրայեղ ենթադրութիւն է, որ հիմնւում է ռուս բիւրօկրատիայի մինչև այժմ ցոյց տուած անխորհուրդ ու կործանիչ բոլոր ձեռնարկների վրայ, որոնք նրա ասելով միակ միջոցն են սահմանադրական կարգերը խաղաղ ճանապարհով, առանց ցնցումների տեղաւորել երկրում հին բէժիմի փոխարէն։

Եթէ կառավարութիւնն այդչափ վստահ լինէր իր ոյժերի վրայ, նա նոր Դումա չէր էլ գումարել տայ, որ ստիպուած լինէր դեռ չը բացած ցրել։ Մի բան ճշմարիտ է, որ նա չը պիտի դիմանայ նման յարձակումների, որպիսիք տեղի ունեցան նախկին Դումայում։ Բայց այդ դեռ շատ հեռու է Դուման ցրելու քաջութիւնից. եթէ այնտեղ դրուին խիստ պահանջներ, օր. ընդհանուր ամնիստիա, մի՞թէ ենթադրելու է թէ անպատճառ նոր ուկազ պիտի դուրս գայ Դուման ցրել հրամայող. պառաւած բիւրօկրատիան այդչափ էլ անփորձ աղէէսներից չէ, որ իր գործերը չը յարդարած՝ այդպիսի մի սխալ քայլ անի։ Նա լաւ գիտէ, որ այսօր ամբողջ աշխարհը լարել է իր բոլոր ուշադրութիւնը՝ տեսնելու նոր Դումայի բռնած դիրքը դէպի կառավարութիւնը և նրա տուած քուէի վրայ պիտի հիմնէ իր վստահութիւնը դէպի այն փոխառութիւնները, որոնք

այսօր մահւան ու կեանքի հարցեր են ռուս կառավարութեան համար։ Այդ կէտը երբէք չէ կարող մոռանալ բիւրօկրատիան, իսկ միւս կողմից, որ աւելի կարևորն է, մի՞թէ նա կը մոռանայ անցեալ դասը. այն դիմումը, որ Նիկոլան արեց ռուս ժողովրդին անցեալ տարի՝ Դուման ցրուելուց անմիջապէս յետոյ՝ բացատրելով այդ քայլը Դումայի պատգամաւորներին տածած իր անվստահութեամբ, ի՞նչ արժէք ունեցաւ ժողովրդի աչքում։ Կադէտային Դումայի փոխարէն Սոցիալիստ Դումա գումարուեց։ Հաշիւը շատ պարզ է. եթէ նորից ցրի Դուման, վստահ պիտի լինել, թէ նա Կարմիր կը լինի։ Եւ այդպիսի մի փորձ Նիկոլան այլևս չի անի։

Անհաւանական չէ, եթէ նա մի ուրիշ փորձ ուզէ անել—Դուման իսպառ վերացնել։ Եւ դա կ'անի նա, քանի դեռ փորձած չէ նրա հետևանքները։ Բայց նախքան դրան դիմելը, ինչպէս նշաններից երևում է, նա պիտի աշխատի աջակողմեան պատգամաւորների միջոցով համոզել պահանջկոտ մասին, նախ մեղմ և ընդունելի առաջարկութիւններ անել և աստիճանաբար անցնել դէպի ծայրահեղ պահանջները։ Եւ մի քանի թեթև առաջարկները լռութեամբ անցնելուց յետոյ, ցոյց պիտի տայ աշխարհին թէ Դուման համերաշխ է ընթանում կառավարութեան հետ, և կարճ միջոցում եւրոպական բանկերից կը քաշի այն, ինչ որ պէտք է հէնց նոյն Դուման իսպառ վերացնելու դէպքում գալիք „էարիքի“ առաջն առնելու համար։ Մենք, ի հարկէ, մի բոպէ չենք կարող մտածել, թէ Դումայի ծայրայեղները կը խաբուեն այդ խաղով թէկուզ Դուման մի հաստատ հողի վրայ դնելու յոյսով կամ թէկուզ դրանով Ռուսաստանում տեղ-տեղ ծագած պոգրոմները սահմանափակելու մտքով։ Դա կը լինի ինքնախաբէութիւն. և այդպիսի մի թուլութիւն Դումայի անդամների կողմից նախանշանը կը լինի մեծ վախի այն սպառնալիքի հանդէպ, որ այնչափ կեղծօրէն տարածում է բիւրօկրատիան։

Նման դէպքերում երկիւղը ոչ միայն կը կազմալուծի դումայի ամբողջութիւնը, ուրեմն և ոյժը, այլև որ գլխաւորն է, ժողովրդի մէջ կորցնել կը տայ հաւատն ու վստահութիւնը դէպի այն մարդիկ, որոնց իբրև իր ծով ցաւերի արտայայտիչ՝ ուղարկել է այնտեղ ձեռք բերելու այն, ինչ ինքը երազում է ստանալ։

Իսկ վստահութեան խախտումը ժողովրդի մէջ դէպի իր ներկայացուցիչը կը դառնայ մի աղէտ, որի առաջն առնելը այլևս անհնարին կը դառնայ։

Ո՛չ, այդ սխալի մէջ չեն կարող ընկնել պատգամաւորները. հեռո՞ւ թուլութեան ոգին Դումայի պատերից։ Նա ժողովրդի ներկայացուցիչն է և հէնց սկզբից պիտի դնէ ամենակարդինալ հարցերը, այն հարցերը, որոնց լուծման այնչափ սրտատրոփ սպասում է ռուսական ալեծուփ աշխարհը։

Թող Դուման վստահ լինի իր իրաւունքի վրայ, որ նա ստացել է ժողովրդից և այդ իրաւունքի ոյժի վրայ յենւած՝ իր հարւածը թող ուղղէ հիւանդութեան ամենացաւոտ վէրքին։ Եւ այդ կը լինի երկայրի սուր բիւրօկրատիայի համար։ Երկուսից մէկը. նա կամ վէրքը դէն պիտի շպրտի, որ անհաւատալի է, կամ Դուման։ Եւ եթէ այս վերջինը պիտի ընտրէ կառավարութիւնը, աւելի լաւ է իսկոյն և եթ առիթը ներկայացնել, քանի դեռ նա չէ կարողացել ուզած փոխառութիւնները կարգադրել և մանաւանդ քանի դեռ ռուս ժողովուրդը Դուման ճանաչում է իր միակ նեցուկ օրգանը կառավարութեան հանդէպ։ Դուման իսպառ վերացնելու մի փոքրիկ սխալով բիւրօկրատիան իր դէմ ցցւած կը տեսնի ռուսական ամբողջ ժողովուրդը՝ մի ոգի, մի մարմին դառած, որի հանդէպ ներկայ դատարկ գանձարաններով պայքար մղելը կը լինի, վստահ ենք, նրա գոյութեան վերջին պայքարը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

ՀԱՄԻԴԵԱՆ ԲՌՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՅԱԶԻՏ, 5 փետրուար

Դժուար է գրչով պատկերացնել այն, ինչ կը կրէ մեր շրջանի հայ ռայեան. ամեն օր նոր զուլում, նոր աղէտ. բողոքելն անգամ մոռացած է տառապող ժողովուրդը։ Եւ որո՞ւ բողոքէ, երբ ոչ ոք ականջ չի դներ. ամեն մարդ սոսկումով կը սպասէ, թէ ահա օր մ'ալ իր տունը պիտի կոխեն և ուզես չուզես պիտի ուտեն, խմեն, թալանեն և եթէ քիչ-շատ գեղեցիկ աղջիկ, կին տեսնեն, բռնի պիտի քաշեն տանին։ Յարաբերութիւնը հայ գիւղերու մէջ համարեա թէ դադրած է. դաշտերն անխնամ մնացած, տնտեսութիւնն աւերւած։ Եւ ի՞նչպէս տնէ դուրս ելլեն, քանի որ վստահ չեն թէ կենդանի տուն պիտի դառնան։ Աղջիկ, կին լինելն արդէն պատիժ մ'է մեր երկրին համար, ուր թիւրք զօրքեր և քիւրդ աւազակներ կը վխտան՝ պատահածը առևանգելու. մարդկային որսատեղիի թատր է մեր շուրջ և ամենքս վարժւած անտարբերութեամբ է որ կը լսենք ամենօրեայ վայրենի յարձակումներ։

Փաստերով միայն քանի մ' անուններ կարող եմ տալ, իսկ անյայտ մնացած բռնութիւններ ու թալաններ անթիւ են։

Յունուար ամսուն թիւրք զօրքեր բռնի կը տանին Մօսուն հայ գիւղէն Աբրօ Վրթայեանի, Յովհաննէս Ղազարեանի, Մարտիրոս Աւագեանի, Մկրտիչ Յակոբեանի դեռահաս աղջիկները։ Մինչ սուգ ու շիւանով բռնւած գիւղացիք այս ու այն կողմ լուր կը հասցնեն, որ կառավարութիւնը այդ բռնութեանց առաջն առնէ, թիւրք զօրքեր առևանգած աղջիկներէն երկուքը օր ցերեկով քաղաք կը բերեն, յայտնելով որ անոնք իրենք կ'ուզեն „հագ տինը“ ընդունել և թիւրքերու կին դառնալ։ Միւթէսէրիֆ փաշան աղմուկի տեղիք չը տալու համար, կ'առնէ աղջիկները և կը կանչէ Տէր Դերսէս քահանան, որ այժմ առաջնորդական տեղապահ է մեր քաղաքին մէջ, կը պատուիրէ անոր՝ շուտ—երեք օրուայ մէջ—ամուսնացնել այդ աղջիկները հայերու հետ և ատով խնդիրը փակել։ Զօրքերը հասկնալով, որ ամեն ինչ „քէշիշի“ ձեռքն է, անոր հինգ ոսկի կաշառք կուտան և կ'աղաչեն՝ համոզել հայ աղջիկները որ անոնք թիւրքանան։ Հայ քահանան շլացած ոսկիներով, կը համոզէ խեղճ ու միամիտ արարածները, թէ բռնաբարուելէն վերջ ալ չեն կրնար ամուսնանալ հայերու հետ, որովհետև ոչ ոք պիտի ուզէ անպատիւ եղած աղջկայ հետ ամուսնանալ, կը յորդորէ մահմեդական

դառնալ և անձնատուր ըլլալ զիրենք բռնաբարողներուն։ Խնդիրն ատանկով ալ կը փակուի։ Եթէ հայ քահանայ մը դրամի շլացումով կրնայ այդչափ ստորանալ, ալ ի՞նչ երեսով հայը բողոքէ թիւրք պաշտօնեաներու կաշառակերութեան դէմ։

Մօտակայ ուրիշ գիւղ մը, Արծաբ, հետևեալ դէպքը կը պատահի։ Գիւղը բնակող զօրքերէն չորսը կը մըտնեն գիշեր մը Խաչատուր Խալաթեանի տունը՝ տանտիրուհին բռնաբարելու և աղջիկը առևանգելու համար։ Խաչատուրի փոքր եղբայր Գրիգորը կը դիմադրէ զօրքերուն և աղմուկ կը հանէ։ Զօրքերը դաշոյնով կը վիրաւորեն զայն և կը հեռանան։ Վիրաւոր Գրիգորը հինգ օրէն կը մեռնի, իսկ եղբայրը Խաչատուր, որ տանը չէր, կը ձերբակալուի, և այժմ մեր քաղաքին բանտը է այն յանցանքով, որ եթէ այդ գիշեր ինք տուն գտնուէր, թերևս խնդիրը սպանութեամբ չը վերջանար։

Լուր կը պտտի թէ զօրքերը որոշեր են դեռ շատ հայ աղջիկներ առևանգել հայ գիւղերէն և նոյնիսկ քաղաքէն։ Հայ ընտանիքներ սարսափով կը սպասեն նորանոր անակնկալներու։ Իսկ թէ ի՞նչ վերաբերմունք ցոյց կուտայ կառավարութիւնը դէպի գաղթական հայերը, այդ հասկնալու համար միայն մեր երկիրը տեսնելու և ամենօրեայ ձերբակալութիւնները դիտելու է։

Համարեա անխտիր բոլոր ճամբորդ հայերը կը ձերբակալուին և երկար ժամանակ քաղաքիս բանտին մէջ պահելով՝ խոշոր կաշառքներ տալէ և իրենց ճամբորդութիւնը առևտրական կամ ընտանեկան անհրաժեշտ կարիքէ ստիպուած ըլլալը ապացուցանելէ վերջ միայն կ'ազատին։ Իսկ ան որ իրապէս երկրէն փախչելու նպատակ ունեցեր է, ալ նեղութիւններ է որ կը կրէ։

Մեր բանտը Վանի շրջակայքէն բազմաթիւ հայ գիւղացիներ կը գտնուին, որոնք տաժանելի օրեր կ'անցնեն։ Անօթութենէն ու կրած տառապանքէն շատեր կը մեռնին. տէր ու տիրական չը կայ, որ անոնց դիակներն առնէ ու անուններն ստուգելէն վերջ թաղէ։ Մեր առաջնորդական տեղապահ Ներսէս քահանան արդէն ճանչցուեցաւ թէ ինչ մարդ է. բողոքել, պահանջել անոր գործին չի գար։

Խեղճ ու անօթի վասպուրականցի ընտանիքներ դեռ կը սպասեն, թէ իրենց տղամարդիկ կովկասէն վաստկած դրամներ պիտի ղրկեն, որ իրենք սովէն չը մեռնին. դեռ լուր չունին, որ անոնցմէ շատեր Բայազիտի աղտոտ փոսերուն մէջ վերջին հանգիստ քունը կը քնանան։

Ալ չեմ խօսիր սահմանը անցնելու ատեն սահմանապահ զինուորներու հանդիպող հայ փախստականներու վիճակի մասին։

Անցեալ աշնան սահմանին մօտ 14 հայ գաղթականներ կը բռնուին զօրքերէ և ողջ-ողջ կ'այրուին։ Զօրքերէն խոյս տուողներ ալ ճանապարհը կորսնցնելով յաճախ օրերով կը թափառին ամայի լեռներու մէջ և սովի ու ցրտի զոհ կ'երթան. ամիսներ վերջ երբեմն պատահական անցորդներ կը տեսնեն ցրտահար դիակներ, և այդ ատեն միայն անոնց ընտանիքները լուր կ'առնեն իրենց սիրելիներու ողբալի վիճակէն։

Եւ այս ամենը դեռ բաւական չեն համոզելու մեր թշուառ գիւղացիները, թէ լաւ է իր հողին կապուած մնալ ու գլգլով, նոյնիսկ արմտիքով սննդուիլ, քան թէ վաթանից կտրուած հեռու ամայի լեռներու բուքերուն բռնուիլ ու անշնչանալ կամ թիւրք զինուորի եաթաղանին զոհ երթալ։ Օրինակները անթիւ են, բայց մենք կուրօրէն կ'երթանք ու անվերջ կ'երթանք դէպի մեզ սպասող անպատում վիհը...

ՎԱՆ, 10 յունուար

Թիմար և Հայոց Ձոր գաւառները հացի պակասութեան պատճառով շատ կը նեղուին։ Եթէ դրութիւնը երկու ամիս ևս անփոփոխ շարունակէ, սովը անխուսափելի պիտի դառնայ այս շրջանի շատ մը գիւղերու մէջ։ Արտաքին նպաստներ այնքան աննշան են, որ շօշափելի և իրական օգնութիւն մը չեն կարող ընձեռել ժողովրդին։

Մշոյ դաշտի վիճակը աւելի քան անտանելի է։ Ժողովուրդը տնտեսապէս քայքայուած է։ Կառավարական խստութիւններէն ճարահատ՝ շատերը սկսած են գաղթել։ Այն կառավարութիւնը, որ թէզքերէի մը համար ամիսներ կը ձգձգէր և հազար ու մի դժուարութիւններ ցոյց կուտար, այժմ ինք սկսեր է ավանսներ ընել և մինչև իսկ մունետիկների միջոցով յայտարարել թէ՝ ով որ ուզէ ընտանիքով Հալէպի և Տիարպէքիրի կողմերը երթալ, թէզքերէ կրնայ ստանալ։ Իսկ միւս կողմէն մուհաճիրներով կը լեցնէ հայ գիւղերը։ Գիւղ չէ մնացեր, ուրկից ընտանիքներ գաղթած չը լինին։ Դաշտի հիմնական կործանման սկզբնաւորութիւնն է։ Վտանգը այնքան ակներև է, որ եթէ այսպէս շարունակելու լինի, քիչ ատենէն դաշտը կը լեցուի թիւրքերով։

Քիւրդերու և թիւրքերու մէջ դժգոհներու շարքերը զգալի կերպով կը խտանան։ Կը սպասուէր որ Էրզրումի դէպքերու նման ժողովրդական շարժումներ այստեղ ևս տեղի ունենան, բայց փաստերը հակառակը ցոյց տուին։ Շատ են ներկայ դրութենէն դառնացածներ, բայց չը կայ կազմակերպութիւն և ոչ ալ ձևակերպուած պահանջներ։ Դեռ երկար ժամանակ և խոշոր ջանքեր պէտք են, որպէսզի իսլամ ժողովրդի գիտակցութիւնը արթննայ՝ ըմբռնելու իր ցաւերու իսկական պատճառները և անոնց դարմանման միջոցները։ Մի փաստ, որ հիմակուընէ իսկ ակներև և անժխտելի է, այն է, որ իսլամ ժողովրդի համակրութիւնը դէպի հայ տարրը կ'աճի նոյն համեմատութեամբ, որքան անոր դժգոհութիւնը կը սաստկանայ դէպի թիւրք կառավարութիւնը։

ՄՈՒՇ, 16 յունուար

Կարմիր ջարդէն յետոյ ճերմակ կոտորած... Սասունի և դաշտի արիւնհեղութիւններով, հալածանքներով, անգթութիւններով անարգ բռնապետութիւնը չի բաւականանար, այլ կ'ուզէ Մշոյ սիրուն դաշտը բոլորովին քանդել։ Ան հասկցած կ'երևի որ Սասունն ու Մուշ հայութեան սիրտն է, անոր մի տեսակ հոգեկան կեդրոնը. ալևս չկայ անոր համար միջոցներու տարբերութիւն, ամէն գնով կը ձգտի հայութեան այս ամենազգայուն տեղը հարուածել։ Սալափով, Մրէբայով, մու-

հաճիրներով լեցնելով, քրդերը գրգռելով՝ ժողովուրդը այնպիսի վիճակի մէջ կը դնէ, որ նա ճարահատուած գաղթէ, հեռանայ այս չնաշխարհիկ երկրէն։ Այժմ Մշոյ դաշտին մէջ չ'գտնուիր գիւղ մը, ուր երկու տուն ազատ ու տնտեսապէս անկախ ապրին. բոլորը սոված են և հազիւ-հազ կարող են գտնել գըլգըլ ըսուած հացահատիկը։ Այս տոկուն ժողովուրդը դեռ չ'պիտի յուսահատուէր և տեղէն չ'պիտի շարժէր, եթէ կառավարութիւնը դիւային միջոցներով ամեն տեսակ ստիպում ի գործ չ'դնէր զայն գաղթեցնելու։ Պագիյէ տուրքերը 200 ձիաւորով կը հաւաքեն Սալամաթ Պէյ գազանի մը ձեռքով, որ մարդիկը կոտելով, կիները բռնաբարելով, ցանքերը ոչնչացնելով կը կատարէ իր պաշտօնը, իսկ չ'տուողները չարչարելէ վերջ՝ ձեռքերը անցագիր տալով Տիարպէքիր կ'ուղարկէ։ Միջոցներ ձեռք առնուեցան մի կերպ դադրեցնելու այս աղէտաբեր և կործանանար գաղթը, բայց անօգուտ. կառավարութեան հետևած ուղղութիւնը և ձեռք առած միջոցները անողոք և աւելի զօրաւոր են։ Այժմս իրողութիւնն այն է որ ամէն մի գիւղէն ամենաքիչը 20-30 տուն գաղթեր է, ուրեմն եթէ 1000-1500 տուն մինչև հիմա հեռացած է ըսեմ, չեմ սխալուիր։ Ջանքեր եղան և դեռ կըլլան հողերը ծախելու առջևն առնել, որ գուցէ հեռացողները ապագային վերադառնան, բաց կառավարութիւնը այս գործին մէջ ևս դիմեց ստոր միջոցի. նա դէլլալներու միջոցով յայտարարեց ժողովրդին, որ աղքատները ազատ թող հեռանան Տիարպէքիր, նոյն իսկ դիւրութիւններ և ճամբու ծախք տուաւ. իսկ ասոնց հեռանալէն 5-10 օր վերջ մուհաճիրներ կը բերէ և կը հաստատէ հեռացողներու հողերուն վրայ։ Եթէ այսպէս շարունակուի, 3-4 տարի ետք Մշոյ զուտ հայաբնակ դաշտը պիտի դառնայ թրքանոց։

Խուզարկութիւնները անպակաս են։ Ասիկա աւելի կ'ընկճէ ժողովուրդը։ Մութ ուժերը հետզհետէ կ'ուժեղանան և լաւերը տեղի կուտան։ Որքան ալ աննկարագրելի լինի դրութեան ծանրութիւնը, բայց և այնպէս ժողովուրդը յոյսեր կը տածէ լաւագոյն ապագայի մը վրայ։ Ի՞նչ թէ այն օրերը հեռու չ'լինէին։

ՏՐԱԳԻԶՕՆ, 18 փետրուար

1906 տարւոյն վերջին ամիսը, դեկտեմբերը, ինչպէս և ներկայ տարիին առաջին ամիսը, յունուարը, իրարմէ ետ չը մնացին հալածական հայուն չարչարանքի նիւթեր հայթայթելու գործին մէջ, քանի որ ներկայ թիւրք բէժիմը կանոնաւոր կերպով կը գործադրէ իր այն ուղղութիւնը, որուն նպատակն է ոչնչացնել հայ տարրը։ Դէպքերն անհամար են։

Էօմրայի Շանա գիւղի երկու նախակրթարանները աւարտած հինգ պատանիներ այս տարի քաղաք կ'իջնան՝ 1—2 տարի ալ տեղւոյս ազգ. ուսումնարանին մէջ իրենց ուսումը շարունակելու համար. այս տղաք քանի մը շաբաթ առաջ տօնի առիթով գիւղ գացած ըլլալով, երբ կիրակի օրը քաղաք կը վերադառնային, քաղաքէն քսան վայրկեան հեռու Տէյիրմէն Տէրէսի կոչուած տեղը, յանկարծ լրտես-գօմիսէր Սէյֆէտդին պէյ՝ փոլիս ընկերներով կը կեցնեն այս տղաքը և ամենախիստ խուզարկութեան կ'ենթարկեն զանոնք և քանի մ'ալ ապտակ կ'իջեցնեն անոնցմէ միոյն, որ համարձակած էր յանդուգն պատասխան տալ, այսինքն մարդու պէս խօսիլ. յետոյ գրաւելով վրանին գտնուած շարադրութեան նիւթեր և ամեն թղթեղէն՝ քաղաք կը տանին կը բանտարկեն, սակայն շնորհիւ կաշառքի նոյն իրիկունը կ'արձակեն այս դպրոցական աշակերտները։

Անկէ երկու երեք շաբաթ առաջ ալ կառավարութիւնը բազմաթիւ զափթիյէներ կը խրկէ Էօմրայի նահիյէն, իբր թէ տաճիկ փախստական աւազակները ձերբակալելու համար. սակայն կառավարութեան նենգութիւնը շուտով երևան կ'ելլէ, քանի որ բազմաթիւ թիւրք աւազակներու փոխարէն միայն մէկ հատը կը բռնեն, մինչդեռ անդին Շանա գիւղէն հինգ հայ երիտասարդներ ձերբակալելով՝ նախ Էօմրայի բանտը կը տանին, անկէ ալ քաղաք բերելով, 15—20 օր բանտը պահելէ յետոյ, ազատ կը թողուն կլորիկ գումարի մը փոխարէն։ Այս երիտասարդները՝ Արտաշ Էքշեան, Սեդրակ Մաւեան, Համբարձում Վահզեան, Սարգիս Գալստեան և Ադամ Յովսէփեան, իբր թէ հոսկէ Ռուսաստան նաւակով հայ տանող բերող բիզէցի նաւապետին հետ գործակից են եղեր, մինչդեռ կառավարութիւնը շատ լաւ գիտէ թէ այդ նաւավարը ո՛ր տաճիկ պէյին առաջնորդութեամբ կը գործէ։

Սակայն թիւրք ոստիկանութիւնը ի՞նչ վնաս կրեց այդ գիւղացիները ձերբակալելով, նախ՝ այժմու բէժիմին ուղղութիւնը նիւթագործեց հալածելով, կողոպտելով և չարչարելով զանոնք, երկրորդ՝ նիւթապէս ալ օգտուեցաւ։ Հայկական շարժումներէն յետոյ հայերը կողոպտելու և անոնց ունեցածին տիրանալու տենչը այնքան աւելցած է տաճիկ պաշտօնէից մէջ, որ եթէ հայկական ամեն խնդիր լմննայ ուէ ձևով, դարձեալ թիւրք պաշտօնէութիւնը բան մը պիտի ստեղծէ դրամ շորթելու համար։ Արդէն առանց ասոր ալ կաշառքը, գողութիւնը թիւրք պաշտօնէին խառնուածքին մասը կը կազմեն։ Նոր օրինակ մը տամ ձեզ. Տրապիզոնի վիլայէթին այժմու Տէֆտէրդարը, իբր ովասիս մը անապատին մէջ, շատ ուղղամիտ և պարտաճանաչ պաշտօնեայ մ'է. իր անաչառ վարմունքը դէպի իր զեղծանող ստորադասները այն արդիւնքը կ'ունենայ, որ անցեալ օրեր, գիշեր մը, յանկարծ երեք հրազէն կ'արձակուի իր նստած սենեակէն ներս, սակայն բարեբախտաբար գնդակները իրենց նպատակին չեն հասնիր և մարդը կ'ազատի այս անգամուան համար։ Վիլայէթին հաշուակալութեան ճիւղին մէջ 400—500 ղուրուշ ամսականով պաշտօնեաներ կան, որոնք 4—5000 ոսկիի տէր են այսօր. այս տեսակ մարդիկ ի՞նչպէս կրնային հարստանալ, եթէ հսկողութիւն ըլլար։

Թիւրք պաշտօնէութիւնը կը կեղեքէ ով ալ ըլլայ, հայ, յոյն, թիւրք կամ հրէայ, միայն թէ հայը կը կեղեքէ առանց ուէ փոքր վախ մը ունենալու և հետևաբար անխնայ կերպիւ։

Գեղերու մէջ գտնուած քիչ շատ ազդեցիկ թիւրք աղաները, պէյերը կամ էֆէնդիներն ալ անտանելի դարձած են. անոնք ալ առիթէն օգտուիլ կ'ուզեն, և հայերը ձրի իրենց արտերը աշխատցընելէ զատ, դրամ ալ կ'առնեն սպառնալիքի տակ։ Հողային գրաւումներն ալ պակաս չեն, միշտ կան։ Զէֆանօզ գիւղի Սօվուգսու

կոչած բլուրը թիւրքերէն գրաւուած կը մնայ, նոյնպէս վերջերս Արղալեա թիւրքերը գրաւեցին հայի սեփանութիւն մը, և հայ գիւղացիներու ամեն ջանք, զոհողութիւն պարապը գնացին, և ասոնք կը կատարուին քաղաքակիրթ Եւրոպայի կշտին, Սև ծովի եզերքը, Տրապիզոնի գեղերուն մէջ։

Կոտորածներէն յետոյ մեր թէ քաղաքի և թէ գիւղերու վարժարանները տակն ու վրայ եղան ուսուցչի պակասութեան և ժողովրդեան նիւթական անկման պատճառաւ, և հազիւ 3—4 տարիէ իվեր սկսած են մի քանի գիւղային նախակրթարաններ վերաբացուիլ սակայն կառավարութիւնը ծուռ աչքով կը նայի այս հազիւ ծլծլող կենդանութեան վրայ, և վարժարանը կը նկատէ աղբիւր ամեն յեղափոխական մտքերու։ Վերջերս թեմական գիւղաքաղաքներու երկու ուսուցիչներու մասին առաջնորդան գրած է որ պաշտօնէ դադարեցուին, որովհետև միոյն եղբայրը յեղափոխական է եղեր, միւսն ալ չեմ գիտեր թէ ինչ է եղեր։

ԿԱՐԻՆ, 25 փետրուար

Այժմ ամէնքը զբաղեցնողը գիւղացիութեան հարցն է։ Դաշտի ամբողջ գիւղերը չը դիմանալով այլևս անտանելի դարձած հարստահարութիւններուն, բռնաբարումին, սոսկալի կեղեքումներուն, ընդհանուր բողոք բարձրացուցած են ըսելով. „Մենք կամ օրթոդոքս կ'ըլլանք, եթէ հիւպատոսարանը մեզ պաշտպանութիւն ցուցնէ, և կամ միւսիւլման. այլևս չենք կրնար համբերել, երբ մեր կիներն ու աղջիկը մեր աչքին առջև կը բռնաբարեն (յիրաւի, վերջերս դէպքեր շատ պատահեցան), մեր լծկանը կը քշեն կը տանին, և վերջապէս ամեն տեսակ սոսկալի միջոցներու կը դիմեն հարկերն ու պաքիէները ժողուելու ատեն“, և այլն և այլն։ Մօտաւորապէս այս պարունակութեամբ խնդրագիր ներկայացուցին ռուսաց հիւպատոսարանը, պաշտպանութիւն խնդրելով, որը և խոստացաւ օգնել, առ այժմ ոչ մեծ բան ընելու համար. բանտարկութեան պարագային միջամտութիւն բնաւ չը ցցուց։

Այս օրերս բաւական մեծ քանակութեամբ գիւղացիներ բանտարկուեցան։ Կառավարութիւնն ամէն կողմ լրտեսներ ունի, տեսնելու համար թէ ո՞ւր կ'երթան, ո՞ր հիւպատոսարանը կը մտնեն, ի՞նչ յարաբերութիւն ունին և այլն։ Ամէն պարագայի մէջ այս ընդհանուր բողոքը մեծ ուշադրութիւն կը գրաւէ. Թիւրք կառավարութիւնը կ'աշխատի լռեցնել, խափանել ձայնը։ Թերևս լսեցիք արդէն, թէ ինչպէս անցեալները Դերճանի Բագառիչ գիւղը կը տաճկնար, և թէ ինչպէս իսկոյն մարդիկ ուղարկուեցան հանդարտեցնելու համար. գնացողներու մէջն էր և տեղւոյս առաջնորդի փոխանորդը։ Ցարակոյս չը կայ որ յաջողեցան, բայց ձայնը բաւական մեծ էր։ Շատեր կը համոզուին թէ ինչ սոսկալի տառապանքի մէջ են հայերը, որ այդ յուսահատական վերջին քայլը ստիպուած են առնել։

ԿԱՐԻՆ, փետրուար 28

Այս տարի տուրքերը գրեթէ վաթսուն տոկոս աւելցած են, այնպէս որ իւրաքանչիւր գիւղէ այսօր յիսուն հազար ղուրուշ (500 ոսկի) աւելի կը պահանջուի։ Ուրկի՞ց տայ խեղճ, արնաքամ գիւղացին։

Հարկահաւաքները չեն ուզեր հասկնալ „չը կայ“-ն։

Քանի մը օր առաջ ամենահաւոր մեքենային այդ գործիքներէն մէկը՝ Փազի անունով՝ Ալիճէ գիւղին մէջ հայ Լազ-Մկիչին (Մկրտիչ) իրեսն ի վեր այսպէս կը գոչէ.

„Մեռնիք, սատկիք պիտի գանձուի այդ տուրքը։ Մեզի այսպէս հրամայուած է։ Ձեր տունը, անկողինը, կահկարասին, հաւն ու ամեն ինչը պիտի ծախենք այդ դրամն առնելու համար. եթէ այդ ալ չը բաւէ, պիտի երթաք քաղաք ու հոն հարուստներուն պիտի ծախէք ձեր կնկան, աղջկան ու հարսին պատիւը՝ վճարելու համար տուրքը“։

Շախսիվէրկին կարինի մէջ չառնուեցաւ, բայց ադոր կրկինը կուզեն առնել հայերէն, այն ալ այսպիսի լիրբ, անխիղճ միջոցներով։ Ու թիւրքերուն մէջ կը տիրէ դատապարտելի անտարբերութիւն դէպի հայի դրութիւնը։

Երէկ դարձեալ դաշտի Թուանջ գիւղի թիւրքերը Մուտուրկացի հայերուն ճամբան կը կտրեն, կը ծեծեն, կը վիրաւորեն, կը կողոպտեն ու կ'երթան։ Եւ սակայն կառավարութեան կողմէն ոչ մէկ շշուկ, ոչ մէկ ձայն։

Այս գիշեր ձերբակալուեցաւ թիւրք երիտասարդ մը, որ նամակ ստացած էր՝ նախապէս հոս գտնուող և յետոյ Երզնկա կանչուող թիւրք աքսորական զինուորականէ մը։ Երիտասարդը յանդգնած է ըսելու, թէ ինչո՞ւ պիտի աքսորուին, տանջուին ու կորսուին այսպիսի մարդիկ, որոնք օգտակար կրնան ըլլալ հայրենիքին։ Ձերբակալութիւնը տեղի կ'ունենայ գիշերը, ու ասոր համար թիւրք ժողովուրդը կը բողոքէ գիշերային ձերբակալութիւններու դէմ։

Այսպէս է թիւրք հասարակութիւնը։ Իրենց համար եղած ամենափոքր դէպքը մեծ դժգոհութեան պատճառ կրնայ ըլլայ, բայց իրենց աչքին առաջ ամեն օր հարստահարուած հային համար ոչ մէկ ցոյց, ոչ մէկ բողոք։

Մինչև ե՞րբ այսպէս գեաւուր հայը ատելութեան առարկայ պիտի ըլլայ։

Յեղափոխութիւնն այսպէս չը ըլլար։

ՄՈՒՆ, 16 փետերուարի

Սո՞վ է, բայց արհեստական սով, որ իր ուժգին թափով ծանրացեր է ժողովրդի վրայ։ Սովամահ լինելու դէպքեր են պատահած գիւղերում, օր. Առվառինջ գիւղի մէջ։ Ո՞վ տեսեր կամ լսեր էր, որ ցորենի շտեմարան կոչուող Մշոյ դաշտը այդ օրեան հասնէր...

Երկրի բէկերը և աղալարներ հարիւրաւոր շտեմարաններ ունին, որ կրնան 2—3 տարի բաւականանալ ժողովրդին. բայց անտէր երկիր է, ո՞վ կայ հարցնող, կամ ժողովրդի տնտեսական դրութեամբ հետաքրքրուող։ Այդ պատճառով բէկերը և աղաներ իրենց ուզածի պէս հացահատիկները կը պահեն մինչև որ անոր գինը կրկնապատկուի և քառապատկուի, որպէսզի դրանով իրենք կարողանան մեծ գումար ձեռք բերել։

Հարկահանութիւնը շարունակուում է ամենախիստ միջոցներով։ Որպէզի խեղճ գիւղացին իր կաշին կարողանայ ազատել այդ չարչարանքներից, նա դիմում է

գիւղի աղային կամ բէկին, վերցնում է նը-
բանից ամիսը 8—10 առ 100 տոկոսով փող. իսկ ձմեռ
ատեն կաւը ռով է փող վերցնում, օրինակ, նա առնում
է աղայից 10 ղրշ. գարնան նրան մի տարեկանոց ոչ-
խար տալու պայմանով. հակառակ պարագային, եթէ
ոչխար չունենայ տալու՝ պարտական է նրան ստացած
10 ղրշ. տեղ 25 ղրշ. տալ։ Այդպիսով նա լինում է
աղայի ճանկերի մէջ։ Զանցած մի քանի շաբաթ, հարկահանը
փող է պահանջում, աղան և բէկը նմանապէս։ Տա-
բաբախտ մարդը ճարը կտրած ծախում է իր ստաց-
ածքը և գաղթում։

ՄԻ ԲԱԺՆԻՒՐ ՔՈՒ ՀՈՂԷԴ

Անողո՜ք իրականութիւն։

Դժբախտօրէն կեղեքւած աս հմայական հայ ցեղը,
իր բնագաւառի սահմաններէն ներս ու զինքը ծնող
հողին գոգն իսկ, ջնջելու մարմաջը ահաւոր համեմա-
տութիւններ առնել սկսեր է մարդակեր ու անժամա-
նակ կառավարութեան գործարանաւորութեան կուրծ-
քին տակ։

Ու անէացումի և աւերի կոտտանքոտ ցաւը որ իր
դժնէ ու սևաթոյր գծաւորումը շատ վաղուց սկսեր
էր դարձդարձել այս՝ ճակատագրականօրէն խաչեցեալ
ժողովուրդին հեքոտ կեանքին շուրջը, իր վէտվէտումա-
ները հետզհետէ աւելի անշմար, աւելի լռին բայց
աւելի շշմեցնող դարձնելու տոգորումովն է յատկա-
նշւած հիմա։

Այլևս արիւնի վտակներ չեն որ հայ սարերէն բըղ-
խելով ու քալելով ու քալելով ու դաշտերը լճացնելով՝
հետզհետէ լայնանալէ ու կարմիրով ողողելէ եռք բը-
նաշխարհի ամէն մէկ գիւղն ու աւանը, կ'երթան ջնա-
րակել նաև տարածական լայնութիւնները ծովերուն,
Վերքին խորութեան նշանակը հանդիսանալու համար
չը հասկցող ու անբարոյացած մարդկութեան աչքին...

Այլևս հիմա մայրեր չեն որ իրենց հոգի-զաւակ-
ներուն՝ իրենց աչքերուն տակ իսկ՝ աղեկտուր մահա-
ցումին ահարկու եղերերգութեան հանդիսատես, ցա-
ւատանջ և ուշացիր կը փեթռտեն իրենց մազերը...

Եւ ոչ իսկ առատ են հիմա ծնողակորոյս ու իրենց
քոյներու քանդումովը եղկելի առանձնացումի մը մատ-
նուող հայ տատրակ-որբերը, որոնց չը ցամքող և յոր-
դառատ արտասուքին աղը կուրցնող ծանրութիւնով մը
կը քարանար իրենց կոպիճներուն առջև...

Զէ՛, ամենէն մաշած հոգիներն իսկ պոռչտացնող և
ամենէն աւելի պղնձացած կուրծքերուն իսկ Օգնութիւն
ու Անէծք ու մանաւանդ Վրէժ գոռացնող ատ սարսափ-
ները չեն որ կը կրծեն այլևս կեանքը, դժբախտաբար
սակայն, մեռնիլ չուզող այս հայ ցեղին։

Հիմա շրջանն է լռութեան և շրջանը անաղմուկ
քայքայումին, հիմա հիւանդագին ու շիջելամերձ ու
անձայն հոգեվարքն է սարսռալի, ոճիրին տեղ հիմա
թոքախտն է հայ ցեղին...

Եւ ահա կը տեսնէք դուք ամէն օր, արշալոյսին,
դեռ արևածագէն առաջ, հայ աղջիկներու և հայ երի-
տասարդներու և ծերերու և երեխաներու թափառա-
կան ու անտուն շարան մը որ դանդաղօրէն ու յամ-
բաքայլ կը հեռանայ իր գիւղէն, ցաւին թախիծը՝ սըրտին և դուրս ելլել չուզող արցունքի երկու կաթիլներ՝ իւրաքանչիւրի աչանկիւնին մէջ քարացած. կը տեսնէք դուք այդ բազմութիւնը յուսահատներու, որոնք ձգած իրենց Հողը զոր սիրեր էին այնքան եռանդուն թափով ու իրենց հինաւուրց կեանքը նահապետական սիրով առլցուն, ու կ'երթան միշտ դանդաղօրէն, միշտ յամրաքայլ...

Եւ դուք կը նայիք թախծալից ու արհաւրոտ այդ կարաւանին որ կ'երկարի, կ'երկարաձգի, հայրենի սա-
բերուն ու հովիտներուն մէջտեղուանքէն հետզհետէ
լայնալով, հետզհետէ աւելի սևնալով, հեռուէն տակաւ
առ տակաւ մօտեցող չարաղէտ փոթորիկի մը պէս և
անդիմադրելի մտատանջումով կը հարցնէք դուք ձեզի.

—Ո՜ւր, ո՞ւր կ'երթան այս հարազատները Հայաս-
տանին. .

Ո՜ւր։

Ա՜խ, անիկա ցեղին մէկ հատուածին դագաղը տա-
նող թափօրն է անծայրածիր։

Անիկա գաղթի կարաւանն է։

Ubi bene ibi Patria! „Ուր որ հանգիստ՝ այնտե՛ղ է
հայրենիքը“ ըսին քեզի, տարաբախտ հայ, և դուն
ըսեցիր գոյութեան պէտքերու բնազդէն քեզի տրւած
ատ հրամայողական խրատը և մանաւանդ հաւատացիր
անոր. դուն ա՛լ անկարող էիր քու կեանքդ ամբողջ՝ ըս-
պասարկու ընել տիրապետող գազանութեան, ալ ան-
կարո՛ղ էիր քու պատիւդ պատանդան ընել չը յագե-
ցող շնականութիւններու վաւաշոտ ըղձանքներուն, որոնք
չեն վերջանար, չե՞ն վերջանար։

Եւ սակայն, ո՛չ։ Գիտակցի՛ր միանգամ ընդմիշտ թէ
սադայէլեան խաղ մըն է որ լրւած է քեզի դէմ,
հասկցի՛ր այլևս թէ անե՛լ է, աւա՜ղ, ճանապարհը զոր
ձեռք ես առած և անպորրութեան ու խաղաղ կեանքի
այն հեռանկարին տակ, զոր ուրւագծեր են քու ուղե-
ղիդ մէջ, աւերւող տուներուդ ու անօթի հեւացող զաւակ-
ներուդ արհաւիրքները, ամենակուլ ու սև ու խորխո-
բատ ու անյատակ վիհն է անխուսափելի այլասերումին,
որուն յորձանքոտ մթնոլորտը տառապանքի ու տան-
ջանքի աւելի մեծ համեմատութիւններ և այլապէս
դժնդակ վիշտերու բաժին մը կը սպառնայ քու արդէն
խորշոմած ճակտիդ, քու ա՛րդէն ձանձրացա՜ծ հոգիիդ։

Հաւատա՛, հաւատա՜ աս ճշմարտութեան ու վստահ
եղիր որ բնաշխարհը լքող այդ ցաւագին կարաւանին
վերջին անհատը դեռ չը հասած „հացի նոր երկիր“ մը,
առաջին հանողը արդէն զղջացեր է և իր երկրին ու
ի՛ր օդին ու ի՛ր հողին ըղձանքովը առլցուն ու տեն-
դագին ծարաւովը պապակած՝ կը տոչորի՜ արդէն ետ
դառնալու փափաքով, բայց ո՜ւշ, շատ ո՜ւշ է այլևս։ Ալ
յորձանքն է կորստաբեր այլասեռումին, ալ օտարու-
թեան անբնականութիւնն է անոր ամէն մէկ զգա-
ցումը անխնայօրէն խարազանելու պատրաստ իր կոհա-
կաւորումներով։

Լսէ՛ ուրեմն հեռուէն հեռու քեզի հասնող այս՝ ա-
ղօտ ձայնը և ուժգնօրէն կառչէ այն հողին, որ քուկդ
է, և որուն նայեր են այսքան դարերէ իվեր մինչև քեզի
հասնող սերունդները, կառչէ անոր ամրակուռօրէն...
Իսկ եթէ թոյլ չե՞ն տար որ Մաճդ ձեռք առնես, դուն
դիմէ արդարադատ Զէնքիդ, բայց մի՛ բաժնի՛ր քու
Հողէդ...

ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ՀՐԱՒԷՐ

—

„Յայտարարում ենք Ռուսաստանի և Կովկասի բոլոր Դաշնակցական և Հնչակեան մարմիններին և ընկերներին, նաև բոլոր քաղաքացիներին, որ Հ. Յ. Դաշնակց. Արևելեան Բիւրոն և Հնչակեան Սոց.-Դեմ. կուսակցութեան Ռուսաստանի և Կովկասի պատգամաւորական ժողովը կազմել են իրենց միջից մի լիազօր մարմին՝ մշակելու միջոցներ, միանգամ ընդ միշտ վերջ տալու միջկուսակցական անմիտ թշնամական յարաբերութիւններին և եղբայրասպանութիւններին։

Այդ մարմնի անմիջական գործնական քայլը կը լինի՝ ուղարկել գաւառները իր լիազօր անդամներին և ներկայացուցիչներին՝ քննելու և լուծելու առ կախ մնացած բոլոր խնդիրները, որ պատճառ են դառնում վերոյիշեալ թշնամութիւններին։

Լիայոյս լինելով, որ այդ ընդհարումների կործանիչ և յեղափոխութեան շահերին միանդամայն հակառակ լինելը գիտակցւում է բոլորի կողմից, կոչ ենք անում մեր բոլոր մարմիններին և ընկերներին անմիջապէս դադարեցնել որևէ թշնամական գործողութիւն և ամեն ջանք գործ դնել յուզած մտքերը խաղաղացնելու համար“։

Հ. Յ. Դաշնակցութեան
Արևելեան Բիւրո
Հնչակեան Ս.-Դ. կուսակցութեան
Ռուս. և Կովկասի պատգ. ժողով

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐ

ՂԱՓԱՆԻ ԴԷՊՔԵՐԸ

(Ընդհանուր տեսութիւն)

(Վ. Ն Ի Ջ)

—

Հայ-Թուրքական ընդհարումները կարճ ժամանակով դադարեցին գաւառապետի և զօրքի գալու պատճառով, բայց և այնպէս Վերին Ղափանի աւերած Թուրք գիւղերի բնակիչները, որոնք անցել էին Նախիջևանի կողմը, նորից Օրդուբադի և Նախիջևանի շրջաններից ահագին հօրդաներ կազմած՝ գալիս յարձակւում են Հանդ և Քուրդիքանդ գիւղերի վրայ (սեպտեմբեր 12-ին) իրենց վրէժը լուծելու նպատակով։ Թուրքերը վաղօրօք գաղտնի կերպով հեռացուում են գիւղերի դիրքերը, միամիտ հայերին հարցնում են թէ արդեօք դաշնակցական խումբեր կան, թէ ոչ։ Հայերն էլ պատասխանում են թէ չը կան։ Գաղտնիքներ իմացող Թուրքերը անցնում են Թեւի, աւազակապետ Սուլէյմանի գիւղը, և պատմում դրութիւնը։ Դեռ սեպտեմբերի 10-ին, հայ հովիւներից մէկը տեսել էր Քուրդիքանդի սարում, Փիրհամզայ կոչուած տեղում, երեք զինուած Թուրքեր։ Հայերը նշանակութիւն չեն տալիս հովիւի խօսքերին և գիշերապահներն էլ անհոգ են վերաբերւում։ Յանկարծ, առաւօտեան լուսաբացին, երբ հայերը դուրս են գալիս տներից, իրենց սովորական աշխատանքներին գնալու, Թուրքերը հարիւրաւոր հոգիներից բաղկացած, սկսում են մի մասը Հանդի, իսկ միւս մասը Քուրդիքանդի վրայ հրացանաձգութիւն առնել և հինգ րոպէ չ'անցած, երկու գիւղի չորս կողմը պաշարում են և ծածանում իրենց դրօշակը։ Քուրդիքանդ գիւղում լինում է դաշնակցական կազմից Թադէոսի խումբը։ Հրացանաձգութեան վրայ՝ կանայք և երեխաներ ընկնում են փախչել։ Անմիջապէս Թադէոսն իր քաջ տղերանցով դիմադրութեան է դուրս գալիս և յաջողւում է կէս ժամւայ ընթացքում 27 Թուրք սպանել։ Երբ Թուրքերը վճռական քայլեր են անում գիւղը մտնելու ու կրակելու, Թադէոսն իր խումբը բաժանում է երկու մասի, ժողովրդին հաւաքում եկեղեցու մէջ և ճակատ առ ճակատ կռիւ սկսում թշնամու դէմ։ Թուրքերը այնքան մօտեցած են լինում դիրքերին, որ սկսում են քարերով կռուել և սպանում են դիրքի պահապան զինուորներ Համբարձում Ղազարեանցին և Շահէն Յովհաննէսեանցին։ Ամբողջ 9 ժամ կռուելուց յետոյ, հայերին յաջողւում է սպանել Ազաջրանցի աւազակապետ Ալի բէգին և Միրզին և վեց կռաթաղեցի Թուրքեր։ Թուրքերին փախցնելու գործում մասնակցում են եղել և հանդեցիք իրենց խմբապետներ Փարամազ Թումանեանցի և Ներսէս Աբրահամեանցի առաջնորդութեամբ։

Քաջաբար Թուրքերին քշելուց յետոյ, մերոնք վերադառնում են հանգստանալու։ Այդ ժամանակ Թուրքերը Քուրդիքանդ գիւղի ներքևի մասով, կրկին „Ալի“ կանչելով, ուղղում են միանդամից խուժել գիւղը։ Տղերքը կատաղութեան գագաթնակէտին հասած՝ շրջապատում են Թուրքերին և գուցէ բոլորին կոտորէին, երբ յանկարծ երևում է պղնձահանքերից եկող գեներալ նահանգապետ Բաուերը 15 կօզակներով։ Կռիւը ընդհատւում է, Թուրքերն էլ փախչում են, որին ականատես է լինում Բաուերը։ Վերջինը տեսնելով մի հայ զինուորի հրացանը ձեռքին, հրամայում է կօզակներին՝ հրացանազարկ անել, բայց բարեբախտաբար նա՝ Բէխ գիւղացի Սարգիս Դաւդեանը, չէ սպանւում, այլ վիրաւորւում է և այժմ առողջանալու վրայ է։ Քուրդիքանդում սպանւում են (բացի դիրքերում սպանուածներից) Ղուկաս Համբարձումեանցը, Եւա Գալստեանցը, շիվանիձորեցի Գրիգորը, վաչագանցի Վարդազար Ղուկասեանցը։ Հանդում սպանուածներ չը կային, վիրաւորուել էին խմբապետ Փարամազը և Սարգիս Խաչեանցը։ Թուրքերը փախուստ տալուց՝ թողել էին 43 դիակ, չորս ջուալ Օրդուբաթի սանգակ հացից և մի տակառ նաւթ, որ բերած են եղել գիւղերը հրդեհելու համար։ Երբ Բաուերին հաւատացնում են, թէ Թուրքերը յարձակւել են, նա ժխտում է, ասելով թէ այդ անհնարին բան է, բայց երբ ցոյց են տալիս Թուրքերի դիակները, պաշարները և Թուրքերի ձեռքով կրակած մարագները, այդ ժամանակ փարատւում է կասկածը։ Բաուերը պղնձահանքերից վերադառնալիս Թուրք կռաթաղեցիները յարձակում են գործում նրա վրայ. գեներալը ստիպւած է լինում վերադառնալ հանքերը և միւս օրն է գալիս Հանդ։ Կռաթաղեցիներին նա ոչ մի պատիժ չը տւեց և էկզէկուցիա էլ չը նշանակեց։

—

Սեպտեմբերի 14-ին, Օրդուբադի կողմից անցած հրասակխմբերը, Գենուազի Թէյ և Բուղաքար Թուրքերի օգնութեամբ՝ քշում են Մեղրեցիների 60, Փիշկադեցիների մօտ 50 գլուխ տաւարը և լեհվազեցոց (Թուրքերի) 30 ոչխարները։ Մեղրեցիների տաւարները գտնւում է Թուրք հովի ձեռքի տակ։ Հովիւ Խէյրուլլային աւազակները ճանապարհին սպանում են (Պարսկաստանցի է լինում), որպէս զի չը մատնի իրենց։ Քշելու լուրը հասնելուն պէս՝ մի խումբ հետամուտ եղաւ։ Օրդուբաթի կողմից եկած Թուրքերը մի քանի անգամ մտադրւեցին յարձակումներ գործել, սակայն գաւառապետի և զօրքի գալը խանգարեց յարմար րոպէն, որովհետև եթէ նրանց գալը չը լինէր, ամբողջ Գենուազի Թուրք գիւղերը աւերակ պիտի դառնային...

„Գալիս են... ահա այն լուրը, որ կայծակի արագութեամբ տարածւեց և ընդհատւեց Ղափանի Թուրք-հայկական ընդհարումը։ Եւ հայերը սպասում էին, թէ ինչպէս կը վարւեն ռուս անբարոյականացած բիւրօկրատիայի ներկայացուցիչները, որոնք ամենուրեք արիւն, ողբ ու անհուն տնտեսական քայքայում առաջ բերին։ Եւ եկան... Օգոստոսի 28-ին հասան հանքերը Զանգեզուրի գաւառապետը ստրաժնիկներով, 7 օֆիցերներ երկուհարիւր կօզակներով, մի հարիւրեակ զինուորներով և երկու թնդանօթով։ Զը նայած որ գաւառապետ Միտկեվիչը և ընդհանրապէս օֆիցերները և զօրքը բարեացակամ վերաբերմունք էին ցոյց տալիս դէպի հայերը, այնուամենայնիւ Ղաթար և Քեարխանա Թուրք գիւղերը աւերելու պատճառով իւրաքանչիւր գիւղացի ենթարկւեց 10 ր. տուգանքի։ Իսկ երբ գեներալ Բաուերը եկաւ, տուգանքները դարձրեց 25-ական ռուբլի, իւրաքանչիւր ծխից։ Եւ շնորհիւ այդ կարգադրութեան տուգանքներ առան՝ Վաչագանից—1075 ր., Բաղաբուրջից—925 ր., Կուտկումից—1200 ր., Բեխից—425 ր.,

կավարտից—1200 ր. և Բարաբաթումբից—1025 ռուբլի։ Ռմբակոծեցին այդ բոլոր գիւղերը։ Բուն Ղափանի թուրք գիւղացիների վրայ դրած 10-ական ռուբլի տուգանքները գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ մնացել է նոյնը...

Ղարաբաբա և Ուջանիս գիւղերի վրայ յարձակուելու համար, կառավարութիւնը ենթարկել է թուրքական հինգ, և Խօջահանի հասարակութեան երկու գիւղերը 3350 ր. տուգանքի։ Նոյնքան էլ հայ Ուջանիսի հասարակութեան գիւղերից, այն է՝ Հագարակից—1200 ր., Եղավարդից—1100 ր., Սիրքաթասից—480 ր. և Ուջանիսից 570 ռուբլի։

Կառավարութեան այդ կեղեքիչ ներկայացուցիչները հանքերից անցնում են Զանգիլան գիւղը։ Գաւառապետը ասում է Աբդուլ Սամադ բէգ Զաւանշիրին, „Ռուսաց պետութիւնը մեծ և ահռելի էր, ու ենթադրում էր թէ Եապոնիային կուլ պէտք է տայ, բայց պատերազմը ցոյց տուեց, որ փոքրիկ Եապոնիան ջախջախեց Ռուսաստանին։ Նոյնն է կատարւում ձեզ հետ. թուրքերի անմիտ երևակայութիւնը ենթադրել տուեց թէ, հայերը մի բուռն ժողովուրդ կազմելով՝ կարելի կը լինի նրան կուլ տալ, սակայն տեսնում էք, որ հայը այնպիսի վերք հասցրեց ձեզ, որ տարիներով չէք դրստելու և իմ անկեղծ խորհուրդն է մոռանալ բոլորը և սրտով հաշտուել, որովհետև պատերազմական գործողութիւնները ժողովրդի քանակութեան հետ չեն կապուած, այլ նրա յատկութեան և կուլտուրականութեան հետ“։

Սեպտեմբերի 5-ին, գիշերելով Նէադի թուրք գիւղում, ամսի 6-ին պաշտօնեաները հասան Մեղրի։ Կօզակները և զինուորները Նէադեցիների տները թալանել և բերել էին Մեղրի վաճառելու։ Նէադեցիներից պահանջեցին 2900 ր. տուգանք՝ շիվանիձորեցիների վրայ յարձակուելու, Դաւիդ Մելիք-Փարսադանեանցին սպանելու, և սահմանապահ երկու զինուորներին վիրաւորելու համար։ Մօտաւորապէս 400 հոգով ամբողջ 6 օր մնացին Մեղրիում։ Դա մի քաղաքավարի էկզէկուցիա էր՝ Վերին Ղափանի թուրքական գիւղերի վրայ արած յարձակման պատճառով։ Ամբողջ օրերով բոլորած կանաչ սեղանի շուրջը՝ օֆիցերները „մակարա“ էին խաղում, 10 տարուայ գինիներ խմում։ Զինուորները այգիներում մրգեղէն չը թողեցին։ Սեպտեմբերի 8-ին գաւառապետը կօզակներով գնաց ներքին Վարիանայուր թուրք գիւղը և այրել տուեց 4 տուն, առաւ 17 հրացան, 1000 ռուբլի տուգանք և ձերբակալեց երեք յանցաւորներին՝ պըրիստավին, ուրեադնիկին և ստրաժնիկներին դիմադրութիւն ցոյց տալու համար։ Մեղրեցիներից առան տուգանք 800 ր., Վահրավարցիներից—1800 ր., Օրդուբաթցիների ոչխարները քշելու համար, Կալերից—500 ր., Վանքից—700 ր., Լիշկից—800 ր., Տաշտունից—700 ռուբլի։

Սեպտեմբերի 12-ին ճանապարհուեցին դէպի Հանդ՝ անցնելով Վերին Ղափանի աւերուած Փիրդավտան, Օխչի, Շաբադին, Քաջարանց գիւղերով։ Փիրդավտանի ժայռերի մէջ կուտակուած դիակները տեսնելուց՝ գաւառապետը մտադրուած է եղել խիստ էկզէկուցիա դնել Հանդ, Քուրդիքանդ, Մազրա և Փուխրուտ գիւղերում։ Այդ ժամանակ Փուխրուտում է լինում մեր հերոս Մուրադը. լսելով գաւառապետի մտադրութիւնը, պրիստավ Շահգալդիեվի միջոցով սպառնում է և առաջարկում է զօրքը դուրս բերել, հակառակ դէպքում, „գաւառապետին և օֆիցէրներին տէռորի պէտք է տայ“։ Գաւառապետը բաւականանում է տուգանքով, այն է՝ Հանդից—500 ր., Քուրդիքանդից—600 ր., Մազրայից—300 ր. և Փուրխուդից—400 ր.։

Սեպտեմբերի 24-ին Մեղրի եկան Նախիջևանի գաւառապետ Դուդնիկովիչը և Օրդուբաթի կօմանդիրը, մի հարիւրեակ հետևակ զինուորներով, և մնացին 4 օր։ Եւ այսպէս դալիս են ու գալիս։ Փոխանակ դարման անելու այսքան ցաւերին, մինը միւսի յետևից, շարան-շարան, ինչպէս ճանապարհի քարան, գալիս են և գիւղերը ոտնատակ տալիս՝ երկու տարրերին բացարձակ քայքայման հասցնելով։ Իսկ ո՞ւր գնացին այն հազարաւոր ռուբլիները, որ առան հայերից և թուրքերից։ Ժողովրդի աչքին թող փչելու համար՝ Ղափան „կօմիսսիա“ եկաւ իբրև թէ տառապեալ օրայ հացի կարօտ գիւղացիներին նպաստելու։ Եւ ի՞նչ էր տուածը—մի քանի ռուբլի։ Ժողոված տուգանքների մի քառորդը չը տուին սովալլուկ գիւղացիներին։ Աւազակնե՛ր, մեծագոյն ոճրագործնե՛ր...

—

Ամբողջ Ղափանի և Գենուազի հայ ժողովուրդը իր բուռն շնորհակալութիւնն է արտայայտում Դաշնակցութեան մարտիկներ՝ Մուրադին, Կայծակ-Առաքելին, Աւետիսին, Կորիւնին, Խէչօին, Հայրիկին, Ենոքին և բոլոր տեղական խմբապետներին և քաջարի կուռողներին, որ այնքա՛ն փայլուն կերպով տարան իրենց վրայ դրած միսիան։ Ժողովուրդը հաւատով և յարգանքով է վերաբերուում դէպի Դաշնակցութիւնը։ Եթէ չը լինէին նրա մարտիկները և պատրաստած այծերը, վաղուց ամբողջ Ղափանի գիւղերը անդառնալի կարած կը լինէին։ Այդ յարգանքի դիմաց, նոյն ժողովուրդը իր արգահատանքն է յայտնում այն անարժան յեղափոխականներին, որոնք չը կանգնեցին իրենց կոչման բարձրութեան վրայ և շատ չարիքների պատճառ դարձան։ Անուններ հարկաւոր չէ տալ...

Իսկ դուք, աղնիւ, քաջարի, ձեր պարաքը կատարող և փայլուն մահով արիւնների դաշտերի և ձորերի մէջ նահատակուած զինուորներ, սիրելի ընկերներ, աշխատաւոր և քրտնաջան գիւղացիներ, մայրեր և քոյր տղջիկներ, դուք բոլոր զոհերդ, հանգիստ եղէք, Ղափանի և Գենուազի հայ ժողովուրդը, մեծ ու փոքր, տղամարդ և կին, խորին ակնածութեամբ է յիշում ձեր բոլորիդ անունները։ Ցարդանք ու պատիւ ձեր յիշատակին...

ՔՐԻՍՏԱՓՈՐԻ ԵՒ ԷԴԻԱՐԴԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

—

Մարտի 17-ին լրացաւ ճիշտ երկու տարի, երբ մեր անզուգական ընկերը և գործի մարդը, Քրիստափոր, անհետացաւ մեր սեղմ շարքերից։ Ընկաւ վայրկենապէս այդ վեհ հոգին անշշուկ, անձայն, հեռու այն աշխարհից, որի համար նա տարիներով տքնել էր, հեռու ընտանեկան յարկից և ընկերական շրջանից, Բալկանների մէջ, Վիտօշի լանջի վրայ։ Եւ նրա անկման բօթը արագ, որչափ կայծակի փայլը, սլացաւ ամենուրեք՝ պատմելու վշտոտ սրտերին, դարդով շաղախուած ոգիներին և արցունքով ողողուած ընտանիքներին, թէ չը կայ նա, որ ապրում էր ու շնչում միայն ստրուկների համար ազատութիւն նուաճելով։

Բօթը ծանր էր ու շշմեցուցիչ։ Բազմաթիւ գաղափարակիցների մէջ միայն արցունքն էր խօսում։ Հակառակ բանակներից իսկ „ափսոս“ խօսքը դուրս թռաւ այդ մեծ կորուստի հանդէպ։ Ամենքը միաբերան մատնացուցին նրա կեանքն ու գործը, ամենքը սրբացրին նրա աճիւնը։

Եւ նա արժանի էր դրան։

Դարերով հալածուած ու տառապած հայ ժողովրդի բողքն էր ներկայացնում նա իր էութեամբ, և նրա դարերի կրած զրկանքների և վիրաւորանքների յաշեւյարդարութիւնն էր դարբնում իր գոռոզ կրծքում. երբեք հարիւր հազար նահատակների վրէժն էր սնուցանում նա իր անզուսպ սրտում։ Եւ ռազմիկների մի ամբողջ բանակ նրա ետևը կանգնած՝ սրտատրոփ սպասում էր արդար հատուցման այն ոճրագործի, որի ձեռքերով այնչափ դիակներ փռեցան մեր հայրենիքի աւերուած ու մոխրացած փլատակների տակ։ Մի ամբողջ ժողովուրդ, շունչը կտրած, ականջ էր դառել լսելու մեծ պայթիւնը և Վիշապի տապալումը։ Սակայն բախտը ուրիշ կերպ էր տնօրինել։ Սպա-

նիչ պայթիւնը տեղի ունեցաւ անժամանակ և իր հետ անդարձ կերպով տարաւ ազատութեան Մարտիկին։

Եւ եթէ այսօր մեզ համար կրկնակի կսկիծ է Քրիստափորի մահը, այդ ոչ թէ նրա թողած զգալի պարապն է, ոչ՝ դա ամեն մի իսկական յեղափոխականի հետ կապուած ցաւալի, բայց երբեմն անխուսափելի մի իրողութիւն է՝ այլ այն, որ նրա մուրազը կիսատ մնաց իր սրտում։ Ու մեր Քրիստափորը օտար և խոնաւ բնակարանում անհանգիստ՝ իր խորաթափանց աչքերը մեզ յառած՝ խնդրում է ու համոզում, պահանջում է ու հրամայում—դէպի պայքար, դէպի նոր գործ... Ուխտեալների բանակը կազմ է ու պատրաստ և Քրիստափորի կտակը սրբազան նրանց սրտերում։

—

Էդուարդ—մի անուն, որ այնչափ սերտ կապուած է Քրիստափորի կեանքի վերջին ժամերին։ Լինելով նրա գործակից ընկերը թէև կարճ ժամանակով, բայց իրեն էր վիճակուել լինել նաև նրա անձնազոհութեան, նրա խանդավառ ինքնամոռացութեան ու գերագոյն մահուան ընկերը։ Երկուսի սրտերն էլ միևնոյն զգացմունքով էին տրոփում ու միևնոյն հրապուրիչ ապագայով ոգևորուած՝ կատարում և այն վերջին փորձը։ Ու միևնոյն հարուածով իրենց վերջին շունչը իրար խառնած՝ վերջին մնաս բարովի ու խրախոյսի մրմունջներն էին առաքում ողբացեալ ընկերներին և հալածական հայ ժողովրդին։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՌՈՒՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ

—

Կովկասից եկող լուրերը վերին աստիճանի յուսահատական են։ Անմիտ և եղբայրասպան պատերազմները իրենց տխուր հետևանքներն ունեցան։ Երկրի տնտեսական կեանքը, արդիւնաբերական մեքենան միանգամայն աւերուած, խախտուած է։ Սովը, որ սկսուած է Շուշու, Զանգեզուրի, Գանձակի և հարևան գաւառներում՝ սպառնում է ահաւոր չափերի հասնել։ Մասնագէտ հետազօտողների ուսումնասիրութեանց համաձայն անհրաժեշտ է առնուազն երկու միլիոն բուբլի, որպէսզի գոնէ կարելի լինի դժնդակ չարիքի առաջն առնել և նրա սարսափելի հետևանքները չեզոքացնել։ Ժողովրդական թշուառութիւնն աւելի է բարդւում թէ բնական և թէ արհեստական յաւերով։ Հասարակական մեքենան ցրիւ տալու համար՝ պատերազմների և սովի ճակատագրական ու անխուսափելի հետևանքները գալիս, ամրապնդւում են տարափոխիկ հիւանդութիւններով, գաղթականութեամբ, առևտրի անկումով, վարկի և վստահութեան նուազումով։ Առողջական կեանքը զարնուած—մահերի թիւը հրեշաւոր, սոցիալական կեանքը հարուածուած, փախչողների քանակը սոսկալի, տնտեսական օրգանիզմը քայքայուած, սովածների ու մերկերի բանակները խիտ։ Ու մի զարմանալի ճշտապահութեամբ կարծէք անհրաժեշտ է, որ խեղճութեան ու հեկեկանքի այս նեագը ներդաշնակի դողութիւնների, աւազակութիւնների, ոստիկանական թալանների, կառավարական սարսափների, հարկային կողոպուտների հետ...

Մի հսկայական գերեզման բովանդակ կեանքի...

Ի՞նչ պէտք է լինի վախճանը այս գերագոյն անարդարութեան և հետևանքը այս անօրինակ թշուառութեան։ Հասարակական ոյժերը ցրիւ եկած, կենսական զանգուածը վիրաւոր, պետական ամբողջութիւնը կազմող բոլոր մասնիկների յարաբերութիւնները լուծուած։ Մի ընդհանուր, ահարկու և չարագուշակ անհաւասարակշռութիւն, որից տուժում է կովկասցին ու լեհասանցին, Սիբիրն ու Ֆինլանդիան և ամեն մի խորշ, ամեն մի հեռաւոր անկիւն լայնարձակ Ռուսաստանի։

Միջազգային կապերի շնորհիւ ռուս երկրի այդ տխուր անհաւասարակշռութիւնը իր հեռաւոր արձագանքներն ունի նաև հարևան պետութիւնների մէջ։ Եթէ ուշադրութեան չառնենք Թիւրքիան ու Պարսկաստանը՝ գէթ պիտի միշատակենք Եւրոպան, ուր հասարակական միտքը այնքան է զբաղուած Ռուսաստանի խնդիրներով և ուր տնտեսական, առևտրական, արդիւնաբերական շարժումները այնքան սերտ յարաբերութեան մէջ են մեր երկրի հետ։ Այսպիսի մի դարում, երբ ամբողջ արևմտեան աշխարհը ձգտում է արխիւը նետել պատերազմական հասկացողութիւններն ու ռազմային հակումները և ապրել արդիւնաբերական, ինդուստրիալ մի դրութիւն, սահմանակից Ռուսաստանը, մանաւանդ վերջին դժբախտ տարիներում, անցնում է մի շրջան, որ շատ կողմերով յիշեցնում է մարդկութեան նախապատմական ժամանակները.—ցեղերի արիւնահեղ կռիւներ, քաղաքների ու գիւղերի կործանում, հեկատոմբներ, արիւններ, աւերումներ, գերեզմաններ։ Կեանքի մի այնպիսի անհաւասարակշռութիւն, որի նմանը կարդում ենք հինաւուրց պատմութիւնների մէջ և որի մասին երազել անգամ չէինք կարող քսաներորդ դարի քաղաքակրթուած պետութեան յաւակնութիւնն ունեցող մի երկրի համար։

Սակայն դժբախտաբար այդ է օրւայ պայծառ ու ճշգրիտ իրականութիւնը։

Մինչև ո՞ւր է գնալու այդ տարօրինակ անժամանակայութիւնը և այդ վհատեցուցիչ անհաւասարակշռութիւնը, որով մենք կը կամենայինք որակել իրերի այս բռնի դադարը։

Այստեղ է ահա, որ միմեանց ընդհարւում են բազմաթիւ մտածումներ ու համոզումներ։ Ոչ ոք չէ տարակուսում այլևս, որ կեանքի այս վտանգաւոր անկանոնութեան պէտք է սահման դնել։

Ամենքի համար պարզ է, որ հասարակական, իրաւական, տնտեսական և այլ կարևոր ոյժերի այս դժբախտ ցրիւը չէր պիտի երկար տևողութիւն ունենայ։ Բայց թէ ի՞նչ եղանակով և ի՞նչ ճանապարհով պիտի վերականգնի այդ ոյժերի կրկին զուգակցութիւնը. ի՞նչպէս պիտի դրանք վերստին կապւեն միմեանց հետ—խնդիրը այս է և այս կէտումն է, որ տարբերւում են հասարակական և քաղաքական աշխարհայեացքները։

Հնարաւո՞ր է արդեօք, որ սոցիալական ամբողջ իրաւակարգը այսքան տատանումից և այսքան ճօճումից յետոյ վերստին իր նախկին տեղը բռնի. բայց չէ ո՞ր նոյն այդ տեղի անյարմարութիւնից է առաջացել այսօրւան ամբողջ դրաման։ Եթէ նախկին օրգանիզմը իր բնական միջավայրում լիներ շարժւելիս, եթէ նրա յարաբերութիւնները հարևան տարրերի հետ տարածութեան և տևողութեան անհրաժեշտ չափերը պահպանած լինէին—այսպիսի մի վիթխարի մրրիկ չէր առաջանայ։

Ժամանակակից անհաւասարակշռութեան պատճառները ծնունդ են նախկին կեանքի անբնական ու չափազանցօրէն հիւանդագին դրութեան։ Ռուսաստանը նորից չէ կարող ոչ մի պարագայում իր սկզբնական վիճակին վերադառնալ։

Միջազգային յարաբերութիւնների ներկայ չափազանց լայն ծաւալման պատճառով մեր երկիրը իր բոլոր մասերով—թէ տնտեսական, թէ գիտական, թէ հասարակական և թէ մտաւոր արտայայտութիւններով կապուած է արևմտեան երկիրների հետ։ Արդ, մի այսպիսի առընչութիւն հնարաւորութիւն չի տայ Ռուսաստանին՝ ապրել միանգամայն մեկուսացած վիճակում, նախապատմական երևոյթներով, միջնադարեան ռէժիմով, հասարակական և պետական վաղեմի և հինաւուրց կազմով։ Իրար հետ յարաբերութիւն ունեցող ծովերն ու ովկիանոսները—որքան և նրանք միմեանցից հեռու ընկած լինեն—միշտ պահպանում են մակերևոյթների մի ճշգրիտ հաւասարակշռութիւն։ Տարերային ոյժերի բերումով միշտ կանգուն է մնում այդ հաւասարակշռութիւնը։ Հասարակական կեանքի մէջ մի այդպիսի բացարձակ

հաւասարակշռութիւն անհնարին է իհարկէ—սակայն նոյնչափ անկարելի է նաև նրա հակադիր երևոյթը—այսօրուան անհաւասարակշռութիւնը։ Սօցիալական տիրոյթի մէջ և՛ս բնական ոյժերի անդիմադրելի ձգումով իրերն ու շարժումները ձգտում են հաւասարակշռուել։ Ռուսաստանը չի կարող միշտ արևտեան Եւրոպայի հակադրութիւնը ներկայացնել։ Այնքան պայքարներից, հրապարակախօսական այնքան երկարամեայ գործունէութիւնից, յեղափոխական այնքան անձնազոհութիւններից, մտաւորականութեան այնքան շիտակ ճիգերից, տնտեսական այնքան առաջադիմութիւններից, բանւորական այնքան շարժումներից ու գործադուլներից յետոյ անհնարին է, որ իրերը վերստին իրենց նախնական կերպարանքը ընդունեն և կեանքը դարձեալ նախկին վայրենի ու բիրտ վիճակին դառնայ։ Յետաշարժումը կարող է դուցէ մի վայրկեան տիրել հրապարակին, սակայն մի չնչին վայրկեան միայն և այդ նրա համար, որպէսզի յետոյ աւելի մեծ թափով և աւելի մեծ ուժգնութեամբ շարժումը ներգործէ։

Այսպէս ուրեմն, այսօրուան ռուսական իրականութիւնը ո՛չ պիտի մնայ ներկայ անհաւասարակշռութեան մէջ և ո՛չ պիտի վերադառնայ դէպի յետ։ Թէ մէկը և թէ միւս հաւասարապէս անհնարին է ու հաւասարապէս անբնական։ Կեանքը անխուսափելիօրէն առաջ պիտի ընթանայ և հաւասարակշռութիւնը անհրաժեշտօրէն պիտի վերականգնի։ Ու պատմութեան իմաստը այդ կրկնակի շարժումների մէջն է կայանում։

Սակայն մնում է տակաւին մի խոշոր խնդիր, որ ահագին կարևորութիւն ունի պատմական-հասարակագիտական-փիլիսոփայական տեսակէտներից և որի լուծումը գործնական կեանքում մանաւանդ մի էական անհրաժեշտութիւն է ներկայացնում։ Ի՞նչպէս պէտք է ռուսական իրականութիւնը առաջ շարժուի. հանդարտօրէ՞ն թէ յեղափոխական ալիքներով. կամ ուրիշ խօսքով՝ ժողովրդական ուժեղ մասսաների ընդդիմադրութի՞ւնն է օրւայ տխուր ողբերգութեան վախճանը դնելու թէ կառավարութեան և Դումայի միջև կայանալիք համաձայնութիւնը։ Նայելով թէ ինչպէ՞ս ենք հասկանում այդ հարցը տեսականի մէջ, պատմութեան ընթացքում՝ ըստ այնմ էլ շարժման կը հրաւիրուեն մեր գործնական ոյժերը և իրական ձեռնարկութիւնները։ Ամէնքը յոգնած են իհարկէ մահերից ու գերեզմաններից և ոչ ոք չէ կամենում նոր փոթորիկների և մրրիկների ասպարէզ դարձնել մեր առանց այն էլ վիրաւոր իրականութիւնը։

Չափաւորներից ու քաղաքական խոհեմութեան ասպետներից դուցէ աւելի շատ յեղափոխական կուսակցութեան ղեկավարներն են գնահատում ժողովրդի արիւնը և կեանքը։ Ինչո՞ւ կարծել թէ նրանք՝ ազատագրութեան այդ անձնուէր մարտիկները մի հիւանդոտ ու խելագար ծարաւ ունին աւերումների, սպանութեան և արիւնհեղութեան։ Չէ՞ որ ապստամբական և ընդվզումի ալեկոծումներում ամենից առաջ նրանք են տուժում անձնականապէս և չէ՞ որ ոչ ոք չի կամենայ լոկ հաճոյքի ու զւարճութեան համար մեռնել հրացանների որոտի տակ, սուինների բերանում, կախաղանների վրայ և կամ տաժանակիր ու դժնեայ աքսորավայրերում։ Ի՞նչն է ուրեմն նրանց ղեկավարում քաղաքականութեան մէջ և ի՞նչ սկզբունքով են նրանք դիմաւորում իրականութեան։ Ի՞նչն է պատմութեան հրահանգը, սօցիօլօգիական օրէնքը և իրերի երկաթէ անհրաժեշտութիւնը։

Այս է ահա այն նուրբ և բաւական հիւանդոտ կէտը, ուր միմեանց ընդհարւում են յեղափոխականները և չափաւորները։ Վերջիններիս կարծիքով հաշտութիւնը պիտի գերակշռի մեր բոլոր մտածութիւնների մէջ, առաջինների համոզմունքով՝ կռիւն ու ոյժն են ղեկավարում բովանդակ կեանքը և նրանք պիտի մեր ձեռնարկութիւնների ոգին և իմաստը հանդիսանան։ Այսպէս է առաջարկւում պրօբլէմը։ Բացարձակապէս լուծել խնդիրը, իհարկէ, անկարելի է։ Ժխտել միանգամայն հաշտութեան բաժինը և ընդունել միայն ոյժի ու կռւի տարամերժ վարդապետութիւնը—ոչ ոք չէ կարող քարոզել. նոյնիսկ ամենաանհաշտ, ամենակարմիր անիշխանականը համակիր չէ բացարձակութեան թէօրիային։ Հասարակական կեանքը շատ բազմազան է և հասարակական ոյժերը չափազանց տարբեր. դրանք ամէնքն էլ շարժւում են կեանքի մէջ առաւել կամ նուազ ուժգնութեամբ։ Խնդիրը ուրեմն քանակական է և ոչ որակական։ Ո՞ր տարրերն են կարմիր թելի պէս անցնում տիեզերական կեանքի և համաշխարհային պատմութեան միջից—հաշտութեա՞ն թէ կռւի—և ո՞րոնք են գերակշռում հասարակական բարդ յարաբերութիւնների ընթացքում. այս է հիմնական կէտը։

„Մինչայսօրեայ բոլոր հասարակութիւնների պատմութիւնը դասակարգային կռիւների պատմութիւն է“։ Մարքսի այս ծանօթ նախադասութիւնը չեն հերքում ո՛չ պատմական և ո՛չ հասարակական գիտութիւնները. նրանք միայն լրացնում են դասակարգային բառը և կռւի երևոյթը աւելի տարածում ու աւելի խորացնում։ Կռիւ ո՛չ թէ միայն դասակարգերի միջև, այլև ցեղերի, կրօնների, ազգերի, անհատների, իշխանութիւնների, մտքերի բանակում։ Երբ և ո՞ր դարում հին ոյժերը, հին աստուածները տեղի տուին նոր հոսանքներին հաշտութեամբ միայն։ Ե՞րբ և ո՞ր ժամանակում հին դասակարգերը զիջումներ արին համաձայնութեամբ միայն։ Ե՞րբ և ո՞ր շրջանում հին իշխանութիւնները կամեցան ճանաչել նորերի իրաւունքը։ Ամէն տեղ և ամէն ժամանակ—գոնէ մինչև հիմա—ընդհարումների բնական անհրաժեշտութեան մէջ են դրուած եղել երկու ոյժերն էլ հաւասարապէս։ Չափաւոր դպրոցի մտածողները անգիտանում են օրէնքի ոյժ ստացած այս պատմական ճշմարտութիւնը։

Անգլիայի դժբախտ օրինակը տեղի թէ անտեղի մէջ է բերւում. մոռանում են, որ անգամ այդ երկրում, խաղաղութեան և հաշտութեան մակդիրները վայելող նոյնիսկ այդ պետութեան մէջ հասարակական հակադիր ոյժերի սոսկալի ընդհարումներ են տեղի ունեցել։ Տասն և եօթներորդ դարի քաղաքական փոթորիկներն ու բռնկումները պատմութեան սեփականութիւն են դարձել։ Ժողովրդական շարժումները, անգլիական թագաւոր Ժակ II-ի գահընկեցութիւնը, փախուստը Հոլլանդիա և Ֆրանսիա՝ պատմական հանրածանօթ փաստեր են։ Յիշեցէք նաև Իրլանդիայի ազատագրական ճիգերի արիւնոտ դարեշրջանը, Հնդկաստանի նշանակալից շարժումները, վերջին տասնամեակի չեմբերլէնիզմի արտայայտութիւնները, Տրանսվալեան պատերազմը և կը տեսնէք, որ մարդկային իրաւունքների այդ կլասիք ու սկզբնական երկրում ևս՝ ազգերն ու ցեղերը, ժողովուրդներն ու շահագործւող հասարակութիւնները իրենց իրաւունքները պաշտպանելու համար շատ անգամ են ընդհարումների, կռւի տխուր անհրաժեշտութեան դիմել։

Եւ վերջապէս ուրիշների պատմութիւնը մի կողմ թողնենք. ի՞նչ է ապացուցանում Ռուսական պատմութիւնը և ռուսական ազատագրական շարժումների ամբողջ շարքը տասնևիններորդ դարում։ Երեք քառորդ դարից աւելի է, ինչ Ռուսաստանում սկսւած է հերոսական անձնազոհութեան մի հիասքանչ էպօպէա։ Ցարերի բռնապետական ռէժիմը չափաւորելու համար գաղափարի ներկայացուցիչները ոչինչ չը խնայեցին. ոչ հարստութիւն, ոչ հանգիստ, ոչ ժամանակ և ոչ իրենց ամենաթանկագին ստացւածքը—կեանքը։ Աքսորավայրերը լցւեցին ազատախոհ տիպերով, բանտերում այլևս տեղ չը մնաց, և ամենուրեք հրացանի բռնեցին ու կախաղանների վրայ խեղդեցին բոլոր այն զգայուն ոգիներին, որոնք յանդգնում էին ծպտուն հանել կայսեր բացարձակ իշխանութեան դէմ։ Ի՞նչ եղաւ արդիւնքը այս ամենի։ Հին իշխանութիւնը կամեցա՞ւ արդեօք հաշտութեամբ խնդիրը լուծել։ Վերջին երկու տարւայ ընթացքում լայնածաւալ Ռուսաստանը մի կատաղի անիշխանութեան է մատնւած։ Այլևս ազգերը իրար չեն ճանաչում, մարդիկ անասուններ են դարձել, հին, վայրենի մարդկութեան հակումները իրենց ամբողջ ծաւալով նախապատմութիւնից իջան և մարմին ու արիւն ստացան քսաներորդ դարում. հրէական ամենավայրագ ջարդեր, ուսանողական տմարդի կոտորածներ, հայկական զարհուրելի սարսափներ։ Երկիրը մտաւ սրի ու սրածութեան, ազգերը ազգերի վրայ ելան, մարդիկ մարդկանց մը-

սերը կրծեցին, սով, հիւանդութիւն, անծայր թշուառութիւն։ Քիչ մնաց, որ վաղը, միւս օրը Ռուսաստանի ամբողջ ազգաբնակութիւնը եւրոպական բանկիրների սարուկը դառնայ։ Խելամտե՞ց արդեօք հին այժը, որ այդ բոլորը մի անհասկանալի, մի անորակելի սխմարութիւն է։ Ոչ մի ապացոյց չը կայ։ Դրա հակառակ ամեն տեղ դաշտային-ռազմական դատարաններ, կախաղաններ, բանտարկութիւններ, աքսորներ։ Եւ ի լրումն այդ ամենի առաջին մինիստրի պաշտօնական ազդարարութիւնը թէ „մենք չենք կարող և չենք ուզում նստել մեղադրեալի նստարանի վրայ, այլ իշխանութեան“։ Այո, ամենամեծ յանդգնութեամբ ու հաստատուն ոգով նա մերժում է պետական Դումայի օրէնսդրական իշխանութիւնը և իրեն է վերապահում ամեն ինչ։ Զափաւորների հաշտութիւնը էլ տե՞ղ ունի այսուհետև։ Եւ անհերքելի չի՞ թւում արդեօք վաղան ճակատագրական ընդհարումը ռուս կառավարութեան և ժողովրդական խիտ մասսաների միջև։

Այո, այժն է լուծելու և՛ այս ողբերգական ու արիւնաների դրամայի հանգոյցը, որ այնքան երկար տևեց ու այնքան սրտաճմլիկ, և՛ չափաւորների հաշտութեան տխուր ու ձանձրալի պրոբլէմը։ Վաղան օրը, երբ Ռուսաստանի հողազուրկ և իրաւազուրկ գիւղացիութիւնն ու սեփականազուրկ բանւորութիւնը ձեռք-ձեռքի տուած, բոլոր ճնշուած ազգերի, բոլոր ստնահարած ցեղերի, բոլոր վիրաւոր համայնքների հետ մի միայնակ, ամբողջացած ու միապաղաղ ոյժ դարձած, վիթխարի գրոհով ու հսկայական վազքով դիմադրաւէ դէպի հինաւուրց ու անժամանակից իշխանութեան ոճրագործ վայրերը, այդ գեղեցիկ ու պատմական օրը միայն կը լուծուի ռուսական առեղծուածը և կը վերականգնի խախտուած հաւասարակշռութիւնը։

ԹԷՐԹՕՆ.

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Գ.

Ո՞վ Քեզմէ աւելի, Հա՛յր, ճանչցաւ Դառնութիւնը բազմաղբիւր ցաւերուն,
Եւ ո՞վ ապրեցաւ իր սրտին մէջ գեհենը իժաթաթառ Սարսափներուն հայրենի.
Ո՞վ Քեզմէ աւելի մտերմացաւ հսկայական Կսկիծներուն անմխիթար,
Եւ կամ որո՞ւ նայուածքը հաշւեց իր ճամբուն վրայ այնքան Մահե՞ր երիտասարդ...

Դո՛ւ լացիր բիւրերու հետ քանդուած օջախներուն տակ ու սուգի սեմերուն վրայ,
Անո՛նց հետ Դո՛ւ անօթի մնացիր ու անքուն՝ մահը սպասելով ժա՛մ առ ժա՛մ,
Ինկածները ժողուեցիր ու պատանքելով՝ արցունքիդ հետ զարհուրած հողին յանձնեցիր,
Ու հովիտներու մէջ ու կիրճերու վրայ յօշոտուած զաւակներուդ մասունքը փնտռելու ելար...
Դիակները նայուածքիդ առաջ հողին մերկութիւնը տրտմօրէն ծածկեցին,
Ու քաղաքէ՞ քաղա՛ք, գիւղէ՞ գի՛ւղ ու փլատակէ՞ փլատա՛կ արիւնի մէջէն քալեցիր,
Մահին քրքիջը քայլերուդ ընկերացաւ օրօրոցներէն ու կախաղաններու ծայրերէն,
Բայց առիւծի հեկեկանքիդ հետ՝ դարձեալ Վրէժը պատգամեցիր...

Դո՛ւ անապատներու մէջ ողբացիր մահը ինկած Զաւակներուդ ու լերանց կատարներու վրայ սուգ բռնեցիր
Եւ անհունութիւնն ու մենութիւնը միայն ճանչցան անպարփակ ահագնութիւնը արու կսկիծիդ,
Դո՛ւ տափաստաններու վրայ ու ոստաններու մէջ հաշիւը պահանջեցիր անարդարութիւններու,
Եւ ականատեսներն ու թշնամի զոհերը միա՛յն ճանչցան մոլուցքը վագրակորով կատաղանքիդ...

Ո՞վ կրնայ սահմանել խորութիւնը վշտի՛ն վերջին նայուածքիդ հայրական,
Երբ կը գիշերանայ պատարագուող զաւակիդ հրաժեշտի ճակատին.
Եւ ո՞վ կրնայ համարձակիլ աչքերը սեւեռել կնճիռներուդ ահախորշում,
Որոնց մէջէն Ուխտին ցուլերը արևներու հահգոյն մեզի ու կեանքին կը նային...

Դո՛ւ նստած ես խրճիթներու մէջ կիսաւեր, ուր տնանկը իր որբերը կ'օրօրէ,
Եւ բանտերու մթնաշաղին մէջ, ուր Զաւակներդ յուսահատօրէն շղթաները կը կրծեն,
Դո՛ւ կախաղաններու քովն ես, ուր Հաւատարիմներդ Անունդ աղաղակելով կը մեռնին,
Եւ բոցեղէն բազուկներով ներկայ հոն, ուր հարուածները կը ծուլուին...

Ընդհանրումները Քեզի համար սանդուխներ եղան դէպի գագաթները փառքի,
Ու հալածանքի ահագանգերուն զուգընթաց՝ պաշտպանի Բազուկնե՞րդ զինեցիր,
Շանթերը կորզած երկաթէ Բռունցքներուդ մէջ դրիր ու դահիճներուն նետեցիր,
Ու այսօր անընկճելի ու աննահանջ կ'աշտարակուիս թշնամուն դէմ ծրագիրներովդ Զարհուրանքի...

Ահաւասիկ կը մօտենան փառապանծ թուականները բովանդա՛կ Կորովիդ,
Երբ դո՛ւ գիշերէն ներշնչուած, որ անզառամ Մայրն է բոլոր արևներու,
Դարձեա՛լ պիտի հրամայես վրիժածարաւ Շրթունքներովդ մահի բանակներուն,
Եւ արևշող առաւօտի մը հանգոյն նորէն պիտի արփիացնես կողերը մեր լեռներուն մահաստուեր.
Ու զինադադարիդ սգածածան Դրօշակներուն տակ ոգևորող Մայր-հողը,
Պաղ որպէս շունչը թշուառութեան ու զարհուրելի որպէս ժպիտը դաշոյնի,
Պիտի կենսաբերի, պիտի ճիգաւորուի, ոտքի պիտի կենայ նորէն,
Եւ վհատութեան շնագայլերը Նժոյգներուդ սմբակներուն տակ պիտի կոխկռտուին...

Սերունդ մը մեծացա՛ւ այն օրէն, երբ դու առաջին անգամ հեռուներէն
Քու ուխտաւորի ճակատդ եկար քսելու Մայր-երկրին նուիրական հողերուն,
Ու երիտասարդ Արիւնովդ հրայրելով դիւցազնութեան հողին արիւնը ընդարմացած,

Ուխտիդ շեփորներով դահիճներուն ազդարարեցիր հովանաւորութիւնդ ճակատող ըմբոստութեան,
Եւ այսօր, Հա՛յր, Մայր-Երկիրը իր արիւնող ծեռքերովը մաքառողի
Այդ սերունդը Քե՛զ կ'ընծայաբերէ որպէս Վարդաստանը աստուածային արիւնիդ...

Անոր սիրտը Սիրտդ է առնական և հոգին Հոգիդ պայազատ,
Երակներուն մէջ Արիւնդ կը շրջանէ՝ հսկայորդուդ արիւնը վրիժաբոսոր,
Ճակատը ճակատդ է օծեալ ու բազուկը Բազուկդ վիշապասանձ,
Եւ նայուածքներուն մէջ Ցաղթանակդ կը ծիածանէ՝ յոյսի արևները պարուրած...

Ան չը մեռաւ մոխիրներուն մէջ, մեռնելու համար Դրօշակներուդ տակ,
Զի գիշերներու մաքրական բերանէն ունկնդրեց մահանջատ զաւակներուդ ստուերներուն,
Որոնք իրեն պատմեցին Քու մասին և ըսին թէ՝ պիտի ապրի ու սպասէ շեփորներուդ գայստեան,
Եւ թէ՝ Քեզ յուսալով էր որ իրենք մահի հրդեհներուն մէջ նետուեցան աներկիւղ...

Ու հիմայ ոխակալութեան երգերը հիւսելով՝ ականջները հորիզոններուն, կ'ըսպասէ Շեփորներուդ
Որպէսզի զինավառէ իր լանջը վրիժահեռ և արշաւանքի փոթորիկներուն յանձնէ իր առիւծի բաշը սեաւ
Ու մահամփոփ կռուփը պարզէ թշնամուն, որպէս պատասխանը ոճիրին, մոխիրներէն յառած,
Եւ Գունտերուդ հետ մահը ամպրոպէ բռնութեան առաջ ուրկէ Ցեղին բնաջնջումը կը թելադրուի։
Գիտէ որ պիտի գաս զօրութեամբդ հանուր, անխուսափելի որպէս անիւը ժամանակին,
Ամեհի, որպէս լեռը գահավէժ ու արհաւրոտ, որպէս ծովը ալիքախռիւ,
Պիտի գաս, անողորմ, որպէս առիւծը որդեկորոյս, ու անագորոյն որպէս վագրը վիրահար,
Ու Քայլերուդ առաջ Զարչարանքի գիշերը պիտի նուաճուի տեղի տալով հանական Սուրիդ արևին...

Բայց, որպէսզի Փառքդ ստուեր չ'ունենայ, և ո՛չ ալ Արեգակդ ամպ,
Որպէսզի մեր բաղխումէն թշնամին չախչախուի, և մեր սուրերու շաչիւնէն աւերակները ծնին,
Պէ՛տք է որ ամէն Ոխ, ամէ՛ն Վրէժ, ամէ՛ն Ճիգ ու ամէ՛ն Կամք ուրոյն
Եղբայրանա՛ն, միանա՛ն, ծուլուին ու բանակուի՛ն Նայուածքիդ տակ միահեծա՛ն...

Նոյնպէս, այդ օրը, Քեզի հետ ամէնքս ալ պէ՛տք է որ հոն ըլլանք՝ և՛ արու, և՛ էգ, և իմաստուն, և՛ տգէտ,
Կեանքի ամէ՛ն ես, ամէ՛ն բաղդ, ամէ՛ն պատրանք ու ամէ՛ն երազ մերկացած.
Հո՛ն պիտի ըլլանք, զի այդ օրը օրն է Նպատակին, օրն է Ուխտին և օրը Նոր-Հայրենիքին,
Եւ եթէ պահանջէ, պէ՛տք է որ Զինուորեալնե՛րս ամէ՛նքս ալ մեռնինք, որպէսզի Հայրենիքը ապրի՛...

Ու երանի՜ անոնց, որ արիւնի Աւազաններուդ մէջ Ցաւիտենականութեան համար մկրտուած՝
Արցունքի միւռոնդ իրենց բազմասպի ճակատներուն պիտի վերապրին յաշոտումը վերջին.
Ու եթէ անգամ երանի՜ անոնց, որ համբոյրիդ նշխարը կղպուած բերաններուն
Դրօշակներդ պատմուճանած՝ հողը պիտի իջնան որպէս մեռելները ազնուական...

Զի ժամանակը պիտի բանայ զինուորեալ Զաւակներուդ համար իր փառքի մատեանը լուսաւէշ,
Ու իր պատուանդանին վրայ պիտի քանդակէ այդ օրը, որպէս ճիգը անհունօրէն գերմարդկային,
Դարերը որպէս գահ պիտի մատուցանէ յամառօրէն ճակատող Հայրենանուէրներուդ ստուերներուն
Եւ իր թաւալումը, Հա՛յր, ցեղեր պիտի դաստիարակէ քու Կամքի պատմութեամբ։

ՎՏԱՐԱՆԴԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴՈՒՄԱՅԻ ԾՈՒՐՑԸ

Վերջին ժամանակներս միակ խոշոր նորութիւնը, որով ամենից շատ զբաղուում են քաղաքական փոթորկոտ աշխարհում, դա ռուսական II Դումայի հաւաքումն է։ Հակառակ կառավարութեան ձեռք առած ոստիկանական միջոցներին՝ այնուամենայնիւ սև բանակը կատարեալ պարտութիւն կրեց և այս անգամ ձախակողմը Տաւրիկեան պալատում աւելի ծանրացաւ ու աւելի խտացաւ։ Ձայների ճնշող մեծամասնութեամբ Դումայի նախագահ ընտրեց Գոլովին, որ պատկանում է սահմանադրական-ռամկավարական կուսակցութեան (կադէտ) և որ յայտնի է Մոսկվայի զէմստվոում իր ցոյց տուած ժողովրդասիրական գործունէութեամբ։ Սոցիալիստական կուսակցութիւնները Դումայի նախագահական պաշտօնի համար իրենց թիկնածուն չէին առաջարկել, որովհետև չէին կամենում կառավարական շրջանների հետ որևէ յարաբերութեան մէջ մտնել։ Աջակողմեան սև խմբակը խայտառակ կացութեան մէջ է. թէ փոխ-նախագահը, թէ քարտուղարը և թէ միւս կարևոր պաշտօնեաները ընտրուած են ձախից։

Դեռ առաջին նիստերից յետոյ մամուլի մէջ սկսեցին խօսել Դումայի ցրումի մասին։ Ընդհանուր կարծիքն այն էր, որ կառավարութիւնը առանց երկար ու բարակ մտածելու ամենակարճ ժամանակում կը կամենայ ազատուել այդ վտանգաւոր ներկայացուցչութիւնից։ Սակայն արտասահմանեան փոխառութեան խնդիրը կայ, որ ահագին մտահոգութիւն է պատճառում կառավարութեան և որ առանց Դումայի համաձայնութեան թւում է թէ չափազանց դժուարին կը լինի իրագործել։ Այդ է պատճառը, որ ահագին իրարանցում առաջ բերեց Դումայի առաստաղի փլչելու լուրը. մանաւանդ որ դահլիճի այն մասը, ուր տեղաւորուած էին աջակողմեան պատգամաւորները, մինիստրական նստարանները և արտասահմանեան թղթակիցները՝ միանգամայն ազատ էր մնացել։ Ամենքն էլ կարծում էին թէ սև հարիւրակային ժխորը մի անարժան ու տխուր գործով մտադրութիւն է ունեցել ջնջել ժողովրդական

ներկայացուցչութիւնը։ Պատահարը բաւական յուզմունք է պատճառել հասարակութեանը. ամեն կողմից եռանդուն բողոքներ են ուղարկում կառավարութեան՝ պատգամաւորների կեանքի հետ թեթեւամտօրէն վերաբերուելու պատճառով։ Տակաւին մթութեան մէջ է մնում առաստաղի ճեղքման տարօրինակ հանելուկը։

Հինգ օրւայ ընդհատումից յետոյ, մարտի 19-ին կայացած ժողովում, կարդացւում է այնքան ոճիրների ու այնքան անիրաւութիւնների հեղինակ մինիստրութեան յայտարարութիւնը։ Պարոն Ստոլիպին յայտնում է, որ Ռուսաստանը պէտք է վերափոխուի սահմանադրական պետութեան և որ անհրաժեշտ է իշխանութեան ու անհատների իրաւունքները մշակել և սահմանագծել։ Աւելացնում է նաև, որ պէտք է վերացնել հին և նոր օրէնքների հակասութիւնը՝ անհատների և կառավարական պաշտօնեաների ընդհարման առաջն առնելու համար։ Թւելով այն բոլոր օրէնքները, որոնք իրենց կարևորութեան պատճառով յայտարարուած էին տակաւին Դումայի հաւաքումից առաջ և որոնք այժմ յանձնւում են նրա խորհրդակցութեան՝ կառավարութեան յայտարարութիւնը ասում է, որ անհրաժեշտ է նոր հողային օրէնքներ ստեղծել՝ դարմանելու համար ազգի մեծամասնութեան ցաւերը։ Կառավարութիւնը միջոցներ է ձեռք առել—Ստոլիպինի ճառի համաձայն—գիւղացիների վիճակը ամոքելու, նաև իրականացնելու այն վերանորոգութիւնները, որոնք խոստացուած են 1905 թ. հոկտեմբեր 30-ի կայսերական մանիֆեստով—այսինքն խղճի ազատութիւն, անձի անձեռնմխելիութիւն, կրօնական համբերողամտութիւն։

Ուղղափառ եկեղեցին, որ Ռուսաստանի ոյժն ու փառքն է կազմում՝ մասնաւոր կերպով պիտի հովանաւորուի, առանց սակայն միւս եկեղեցիների իրաւունքները ոտնահարելու։ Մինիստրական յայտարարութիւնը խոստանում է նաև ուրիշ բարիքներ, զեմստվօյական, վարչական և տնտեսական վերանորոգութիւններ։ Քրէական և քաղաքացիական օրէնսգրքի մէջ ևս կարևոր սրբագրութիւններ են մտնում. գիւղացիական և բանւորական ապահովութիւններ ևս խոստացւում են։ Եւ խոստումների այս երկար շարքը վերջանում է հետեւեալ շարագուշակ բառերով. „Եթէ մենք կամենում ենք մեր զինուորական ոյժը և մեր հայրենիքի պատիւը պահպանել և չը կորցնել մեր տեղը մեծ պետութիւնների շարքում, չը պէտք է վախենանք մեծ ծախսերից, որ հարկադրում է մեզ Ռուսաստանի մեծ անցեալը“... Եւ երբ սօցիալ-դէմօկրատ պատգամաւորներից մինը ուժգին խօսքերով քննադատում է կառավարութեան գործերը, „Սահմանադրական“ Ռուսաստանի առաջին մինիստրը փոխանակ պատասխանելու՝ հնարաւոր է համարում հետեւեալ պրօվօկատորական նախադասութիւնը արտասանել.

„Մինիստրների նստարանը մեղադրեալի նստարան չէ, այլ իշխանութեան...“

Տխուր ընդհարումի հոտ է բուրում այս յանդուգն ու անիմաստ խօսքերից...

ԱՄՍԱԼՈՒՐԵՐ

Ամսոյս 17-ին, երեկոյեան, Ժընեւի հայ ուսանողութիւնն ու գաղութը, Hôtel de l'Ours-ի մէջ, մի համեստ համախմբումով յիշատակեցին Քրիստափոր Միքայէլեանի և Եդւարդի մահուան երկրորդ տարելիցը։

Տեղի ունեցան մի քանի ճառախօսութիւններ, որոնք գրւատեցին նրանց կեանքն ու գործունէութիւնը յեղափոխական ասպարիզում։

—

Պետական Դումայի համար ընտրուած հայ պատգամաւորների թիւը Անդրկովկասից հինգ է։ Դրանցից երեքը՝ Ստեփան Տէր-Աւետիքեան Գանձակից, Յովհաննէս Սաղաթէլեան ու Սիրական Տիգրանեան Երևանից՝ Դաշնակցականներ են։ Չորրորդը՝ Արշակ Զօհրաբեան Թիֆլիսից՝ Սօցիալ-Դէմօկրատ է, իսկ հինգերորդը՝ Աթաբէգեան Ղարսից՝ կադէտ։

—

Հին-Նախիջևանից գրում են մեզ. „Հայ-թրքական ընդհարումների վախը, որքան էլ լաւատես լինենք, այնուամենայնիւ կայ։ Դրա համար էլ տեղական կօմիտէն բացի միլիցիա կազմակերպելուց, կարևոր զգաց նաև թռուցիկ խմբեր պատրաստել“։

—

Ամիս 15-ին, ուրբաթ, Տրապիզոնում մի սպայ սպանել է տեղի զինուորական հրամանատարին, իր ամսականները կանոնաւոր չը ստանալու վրէժից դրդուած։

—

Մարտի 18-ին, Պարիզում վախճանւեց, Մարսէլէն Բերթըլօ, յայտնի գիտնականն ու մեծ մարդասէրը որ, իր հայրենիքին և ընդհանուր մարդկութեանը ցոյց տուած խոշոր ծառայութիւնների հետ միասին, հայկական դատի ամենաջերմ բարեկամներից մէկն էր Եւրոպայում։ Նա չէ բաւականացել արտայայտել իր զգացումները միայն խօսքով. անհրաժեշտ դէպքերում նա այդ արել է և գործով։ Վերջին տարիներս Եւրոպայի զանազան քաղաքներում կայացած բողոք-միտինգներին նա ունեցել է ջերմ մասնակցութիւն իր արտայայտած համակրութիւններով դէպի տառապող հայ ժողովուրդը և իր նշաւակումներով դէպի թիւրք բռնապետութեան ոճիրները։

Նոյն մարդասիրական ոգով տոգորուած՝ նա էր, որ մէկ ու կէս տարի առաջ իր շուրջը հաւաքած Պարիզի յայտնի հայասէրներին՝ մի խնդրագիր կազմեց և ստորագրել տալով Եւրոպայի քաղաքական գործիչներին, գիտնականներին ու մարդասէրներին, ուղղեց Միացեալ-Նահանգների նախագահ Ռօզվէլտին, հայկական դատը, իբրև միջազգային մի դատ, Լահէի կօնգրէսում դնելու անհրաժեշտութիւնը շեշտելով։

Բերթըլօի մահուամբ հայկական դատը կորցնում է իր զօրեղ պաշտպաններից մէկը Եւրոպայում։

„Դրօշակի“ խմբագրութիւնը այդ կորուստի հանդէպ պարտք համարեց հետեւեալ հեռագրով արտայայտել իր ցաւը հանգուցեալի ընտանիքին։

Հայ Յեղ. Դաշնակցութիւնը իր խորին վիշտն է արտայայտում պարոն Մարսըլէն Բէրթըլօի, մեծ գիտնականի և մեծ մարդասէրի ծանր կորուստի առթիւ։

—

„Դրօշակի“ խմբագրութիւնը, հիմնւելով իր ստացած տեղեկութիւնների վրայ, հարկ համարեց մարտի 25-ին ընդարձակ հեռագիրներով ներկայացնել Տաճկահայաստանի կրիտիքական դրութիւնը Ֆրանսիայի, Անգլիայի և Իտալիայի արտաքին գործերի նախարարներին և նոյն երկիրների գլխաւոր թերթերին։ Հեռագիրներում շեշտուած են հայկական գաւառներում վերջերս տեղի ունեցած բռնութիւններից, առևանգումներից, կրօնափոխութիւններից և գաղթերից փաստեր։

—

Պօլսից, մարտ 23-ին, հեռագրում են „Temps“-ին հետեւեալը.

„Էրզրումից եկած վերջին լուրերը ասում են թէ վալին յայտնեց ժողովրդին, որ սուլթանը ներել է նրանց երկու տարւայ հարկերը և աւելացրեց, որ ժողովուրդը ի պատասխան այդ վեհանձն գործի՝ պէտք է վերջին տարւայ հար-

կերը վճարէ։ Այս առիթով ազգաբնակութիւնը իր հպատակութիւնը յայտնեց, բայց, իր ծայրայեղ չքաւորութեան պատճառով, մերժեց վճարել ամէն հարկ և յայտարարեց, որ ինքը պատրաստ է դիմագրաւելու ամէն տեսակ պատիժ"։

„Էրզրումի վալին տեղեկացրեց Բ. Դրան, որ ինքը բռնել է Կովկասի հայ յեղափոխական կոմիտէների թղթակցութիւնը՝ ուղղած „Համիդիէ" քրդերի պարագլուխներին, որոնց հրաւիրելով միանալ իրենց հետ՝ ապստամբելու համար թրքական լուծը և կազմելու մի անկախ պետութիւն։ Այս նորութիւնը մեծ անհանգստութիւն է պատճառել պալատում, ուր վախենում են թէ մի գուցէ փոփոխութիւն առաջ գայ չորրորդ զօրաբանակի հրամանատար Զէքի փաշայի մտքի մէջ, որից կախուած են „Համիդիէ" գնդերը և որը համարւում է Քիւրդիստանի տէրը"։

—

Մարտի 23-ին, Պետերբուրգում մեռաւ ռուսական Սինօդի նախկին պրօկուրօր Պօբեդօնօսցեւ, 82 տարեկան հասակում։

Ռուս բիւրօկրատիայի չար ոգին էր նա, որ մօտ կէս դարից ի վեր թունաւորում էր ամբողջ ռուսական կեանքը, և վերջին երկու ցարերի օրօք կատարուած բոլոր յետադէմ շարժումների, պօգրօմների, հալածանքների թելադրիչն ու խնկարկուն։

Ցաւ է, որ նա մեռնում է իր բնական մահով, և ոչ թէ տեռօրիստի ոտքերի տակ։

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Ատրպատականի Կեդ. Կոմիտէն՝

Մինարէթի Կոմիտէն ստացել է 1906 յուն. մինչեւ դեկ.

ՃԱՌԱԳԱՅԹ ԵՆԹԱԿՈՄԻՏԷ անդամավճարներ Զօլա խ. 324. 75, Արծիւ խ. 242. 25, Ասպարէզ խ. 207, Կարօ. խ. 80, Քրիստափոր խ. 90, Արիստակէս խ. 100, Խարիսխ խ. 124, Քրիստափոր կանանց խ. 129, Արշալոյս խ. 116.50, Ուխտաւորից 38, Աւետիս մանգալուց. 330, Կ. 500:

Գումար 2281. 50 ղրան

ԾԱՌԱՍՏԱՆԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷ անդա. Տարածող խ. 818, Գոլոշեան խ. 236, Ագրիպասեան խ. 189. 50, Դէրիկ խ. 377, Բարթուղիմէոս խ. 265, Մարտիրոս խ. 109, Աւետիսեան խ. 181. 50, Ուսկով խ. 137. 50, Տէրօեան խ. 10, Վազգէն խ. 28. 20, Հայկածոր խ. 20. 25, գիւղական կազմակերպութիւնից 1000, ներկայացուցից 791,

Գումար 4162. 95:

ՔԱՐԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷ Լեւոն խ. 285, Ծերունի խ. 155, Փայլակ խ. 150, Արաքս խ. 212. 50, Անդրանիկ խ. 220, Մուշեղ խ. 161, Մրրիկ խ. 140, Ալիք խ. 70, Առիւծ I 37, Առիւծ II 9, Հարաւուլ խ. 27, Ժայռի շրջան 150. 50, Նուէր 48. 75, ներկ. 500: Գումար 2165. 75:

ՄԻՆԱՐԷԹԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷ անդամ. Վառ խ. 85, Դուշման խ. 103. 50, Վարազ խ. 87. 50, Խանասօր խ. 79, Քարտաշ խ. 112, Ներկայացուցից 205: Գումար 2165 75:

ՋՕԼԱՅԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷ անդամ. Նամուս խ. 171, Ցոլակ խ. 113, Զարեւանդ խ. 145, Աղբակ խ. 134, Մարդասիրական խ. 56, Սօսէ կանանց խ. 8: Գումար 627:

ԾԱՅՐԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷ անդամ. Քրիստափոր խ. 93, Որոտում խ. 194, Հայրենիք խ. 83. 25, Կայծակ խ. 35, ներկ. 296. Գումար 701. 25:

Բաքարգան խ. 148, Զէյթունիկ խ. 154, Կայծակ խ. 126, Մարդասիրական խ. 30, Նուէր երկու աստրիներից 36: Գումար 494 ղրան:

Ստացուած է նուէր մինից 1 բրաւն. ատր.մինից 35 բրա. փամփուշտ.

ԱՒԱՐԱՅՐԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷ Սօսէ կանանց խ. 1905 յուն. մինչեւ 1907 անդամ. նուէրներ եւ վիճա. 411. 90, Խան խ. 1905 յուլ. մին. 1907 129. Սերոբ փաշա խ. 1905 օգ. մին. 1907 109. 50, Հրայր խ. 1906 մին. 1907 144, Վարդան խ. 1906 փետ. մին. 1907՝ 66, Քրիստափոր խ. 1906 մարտ. մին. 1907՝ 80, Տղմուտ խ. 1906 մար. մին. 1907՝ 31. 75, Արմատ խ. 1906 սեպտ. մին. 1907՝ 22, Անդրանիկ 1906 սեպտ. մին. 1907՝ 26, նուէրներ 10. 60: Գումար 1030. 75 ղրան:

Ընդհանուր գումար 12135, 20 ղրան:

Պոլ. Կեդր. Կոմիտէն՝

Ս. Թաղամէն հանգանակած համար 1՝ 800, ֆր. հ. 2՝ 500, հ. 3՝ 300, հ. 4՝ 200, հ. 5՝ 200, հ 6՝ 200, հ. 7՝ 100, հ. 8՝ 100, հ. 9՝ 80, հ. 10՝ 60, հ. 11՝ 60, հ. 12՝ 60, հ. 13՝ 60, հ. 14՝ 50, հ. 15՝ 40, հ. 16՝ 40, հ. 17՝ 40, հ. 18՝ 40, հ. 19՝ 30, հ. 20՝ 30, հ. 21՝ 30. հ.22՝ 30, հ.23՝ 30, հ. 24՝ 30, հ. 25՝ 24. 70, հ. 26՝ 20, հ. 27՝ 20, հ. 28՝ 20, հ. 29՝ 20, հ. 30՝ 20. հ. 31՝ 20, հ. 32՝ 20, հ. 33՝ 20, հ. 34՝ 20, հ. 35՝ 20, հ. 36՝ 20, հ. 37՝ 20, հ. 38՝ 20, հ. 39՝ 20, հ. 40՝ 20, հ. 41՝ 15, հ. 42՝ 15, հ. 43՝ 12. 60, հ. 44՝ 10, հ. 45՝ 10, հ. 46՝ 10, հ. 47՝ 10, հ. 48՝ 10, հ. 49՝ 10, հ. 50՝ 10, հ. 51՝ 10, հ. 52՝ 10, հ. 53՝ 10, հ. 54՝ 10, հ. 55՝ 5, հ.56՝ 5, հ. 57.5, հ. 58՝ 5:

Ընդհանուր գումար 3607 ֆր. 30 ս.:

ՖԻԼԻՊԷԻ ԿՈՄԻՏԷՆ՝ Թ. Բազարճըզէն հանգանակած Թ. Մհ. Ներսէսեան 10 լեւ, Պ. Մհ. Յարութիւնեան 10, Կ. Մհ. 15, Թ. Մ. Նիկողոսեան 10, Ա. Էկինեան 10, Յակոբ Թ. 19342՝ 10, Յ Թէմերզալեան 3, Խ. Համբարձումեան 5, Ոմն թիւ 19345՝ 5, Ոմն թիւ 19357՝ 10, Ոմն թիւ 19358՝ 5, Կ. Ղազարեան 10, Գ. Թագւորեան 5, Մ. Ղազարեան 2, Ա. Թագւորեան 5, Գ. Էկինեան 5, Պ. Էկինեան 5, Պ. Մելիքեան 15. Թագւոր Թ. 19353՝ 5, Ֆէդայի խումբէն 15, Յ. Մհ. Նիկողոսեան 10, Մ. Գազազեան 5, Գ. Մանուկեան 1, թիւ 19360 5: Գումար 181: Ասամպէյէն հանգանակած Ոմն թիւ 19362՝ 10, Ոմն թիւ 19363 10, Կ. Սիմօնեան 9, Պ. Մարգարեան 3, Հ. Սիմոնեան 4, . Մանուկեան 3. Գումար 39 ֆր.: Պօրեսօվկրայէն հանգանակած.—թիւ 19375՝ 20, Ոմն ազգային 20, թիւ 19383՝ 10, թիւ 19396՝ 20, թիւ 19376՝ 10, թիւ 19378՝ 10, թիւ 19380՝ 10, թիւ 19379՝ 15, 19381՝ 5, թիւ 19382՝ 15, թիւ 19384՝ 10, թիւ 19385՝ 5, թիւ 19386՝ 4, թիւ 19387՝ 10, թիւ 19388՝ 2, թիւ 19389՝ 3. թիւ 19390՝ 9, թիւ 19391՝ 3, թիւ 19392՝ 1, թիւ 19393՝ 5, թիւ 19394՝ 15, թիւ 19395՝ 10, թիւ 19397՝ 5, թիւ 19398՝ 10, թիւ 19399՝ 2, թիւ 19400՝ 5, թիւ 19401՝ 10, թիւ 10402՝ 2, թիւ 19405՝ 5, թիւ 19404՝ 4. Գումար 265 ֆր.: Ֆիլիպէէն հանգանակած.—թիւ 18940՝ 15, թիւ 18941՝ 10, թիւ 18942՝ 30, թիւ 18943՝ 10, թիւ 18944՝ 20, թիւ 18945՝ 5, թիւ 18946՝ 20, թիւ 19947՝ 3, թիւ 28948՝ 15, թիւ 18949՝ 20, թիւ 18951՝ 10, թիւ 18952՝ 4, թիւ 18953՝ 10՝ թիւ 18954՝ 10, թիւ 18955՝ 10, թիւ 19856՝ 5. թիւ 18957՝ 5. թիւ 18958՝ 5, թիւ 18959՝ 5 թիւ 18960՝ 10, թիւ 18961՝ 3, թիւ 19033՝ 40, թիւ 19034՝ 20, թիւ 19035՝ 15, թիւ 19036՝ 5, թիւ 19037՝ 5, թիւ 19038՝ 5, թիւ 19039՝ 5, թիւ 19040՝ 5, թիւ 19041՝ 5, թիւ 19042՝ 50, թիւ 18043՝ 10, թիւ 19044՝ 2, թիւ 19045՝ 40, թիւ 19046՝ 30, թիւ 19047՝ 5. *19048՝ 5, թիւ 19049՝ 5, թիւ 19050՝ 40, թիւ 19051՝ 1, թիւ 19052՝ 20, թիւ 19053՝ 120, թիւ 19054՝ 3, թիւ 19055՝ 15, թիւ 19056՝ 10, թիւ 19407՝ 20,* Զարէն կարկուտ 10, թիւ 19417՝ 1000, Դարանազի 40, թիւ 1200՝ 100, Թուղթ 5, Ստեփանեան 10, Խնձոր 3, Բաղնիք 10, թիւ 19135՝ 5, Պալըգնիէվ 2, Հաց 10, Գիսակ Դիմաքսեան 20, թիւ 19141՝ 5. Ցովակիմ Մինաս 5, Մկրտիչ Մուշեղ 5, Շեխօ 5, Պ. Պունարօղլը 5, Սատրիս 5, Մ. Մարգարեան 10, Պաչօ 5, թիւ 19149՝ 5, Խաչիկ 5, Գ. Ալեքսանեան 3, Զազար 2, Խանութ 60, Մ. Գ. 20, Բանիկ 10, Աբեթնազով 100, Թ. Հ. 20, Խ. Ս. 10, Մխան 20, Հայկակ 30, Արծիւ 150, Արուսեակ 20, թիւ 19109՝ 100, թիւ 19110՝ 10, թիւ 19111՝ 10, թիւ 19112՝ 10, թիւ 19113՝ 20.

Գումար 2676 ֆր.

„Արարատ" սրճարանի զանձանակի սեպտ. ամսական 30, նոյ. ամսականը 37, նոյ. 42, Օր. Կարմիր խաչի Ա. տասնեակից 11, Բ. տասնեակէն 15, Դ. տասնեակէն 13. 50, եւս 13. 50, Գ. տասնեակէն 13. 50, Ա. տասնեակէն 10, Սօսի-Այծեամ խումբէն 15, եւս 13. 50, Տիկ. Շամէ խումբէն 112, Վասպուրական խ. 33, Հէքում-Գագիկ խ. 39, Հրայր խ. 40, Թ. Բազարճըզի Ֆէդայի խ. 25. 50, եւս 24, Պետօ-Պուլկարացի խումբից 21, Քրիստափոր Միքայէլեան խ. 23, Արսէլեան խ. 17, Վրէժի Ա. տ. 62, Վարդգէս խ. 22, 50, Տարօն խ. 22, Պօրեսօվկրատի Շմաւոնեան խ. Ա. տ. 76, Նոյն խ. Բ. տ, 30, Գումար 653: Պնակի հասոյթ 25. 65, Հ. Յ. Դ. օգտին տրուած ներ. զուտ հաս. 360 Տէրօր խ. 35: „Դրօշակի" բաժ. 159, պատկերն. հասոյթ 95. 5:

ՊՐԱՅԻԼԱՅԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷԷՆ—սրճարանի հասոյթ 640 ֆր. ամսավճարներէ 824, նուիր. 26, ծախուած պատկերներէ 10 ամսավճարներէ 253, նուէր 5, հանգանակութիւնէ 1140. 50: Գումար 2898. 50:

ԿԱԼԱՑԷՆ ստացուած 462. 95 ֆր.:

ՊՈՒՔՐԷՇԻ ԿՈՄԻՏԷԷՆ.—Բրայովայի խ. Յ. Ս. Ս. ընկ. 1000 ֆր.:

ՎԱՌՆԱՅԻ ԿՈՄԻՏԷԷՆ.—1906 թ. բանտ. օգտին տրուած ներկայացման հասոյթ 610 ֆր.:

ՍՕՖԻԱՅԷՆ Գ. Տ. Յակոբ. 12 ֆր. Թուլչայի Տօպրոնա խումբէն՝ Արծաթ 9, Համազասպ 18, Արշակ 9, Հայելի 9, Անահիտ 6, Արարատ 9, Արամ 9, Զուտ 9, Կաղամար 9- Հանի Անդրէասի կտակէն 50.

ԴԱՆՈՒՓ ԵՆԹԱԿՈՄԻՏԷԷՆ.—Արարատ ընթ. հաս. 286. 80, Տիկ. Կարմիր խաչի զանձ. 81, Վարազ խ. 33, Կարին խ. 21, Արարատ խ. 15, Նոր տարի խ. 42, Նեմրութ խ, 23, Ֆէդայի խ, 30, Արամ խ. 21, Սերոբ Աղբիւր 24, Հազուլ 27, Գայլ խ. 18, Տարօն խ. 30, Տրդատ խ. 15, Սեպուհ խ. 39, Զինուոր խ. 15, Լիկնանց Արամ խ. 16, Տուզանն 30, Նուէր Աղամէ 10, Թորգոմէ 2, Հրայրէ 10, Կուստէ 5: Գումար 793, 80:

ԲՈՍԹԱՆՃԱՅԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷԷՆ.—1906 թ. հաւէն Դեւեան խ. 20, Սերոբ խ. 75, Կարմիր խաչ 18, Եփրատ 41, Զօրս զանձ 36, Անդրանիկ 40, Աղվարդ 40, Ղեւոնդեան 35, Ծաղիկ 25, Համակրողներ Ո. Պ. Ղ. 20, Ճ. Ս. Թ. 20. Մ. Ս. Բ. 12: Գումար 382 ֆր.

Աղվարդ խ. 132 Ֆր. Կարմիր-Խան խ. 45, Եփրատ խ, 182, Զօրս-Գանձ խ. 170, Անդրանիկ խ. 219, Սերոբ խ. 265, Ղեւոնդեան խ. 176, Ծաղիկ խ. 30, Դեւեան խ. 25, Ա. Ջ. 5, Ա. Ն. 5, Ե. Պ. 20, Ոմն 10, Գ. Ս. 5, Մ. Ն. 4, Մ. Ն, 10, Մուրֆաթի ընկերներէն 108: ընդհ. հանգանակութենէ մնացորդ 130, նուէրներէ 9: Գումար 1550 Ֆր.

Համագումար 11254 Ֆր. 55 սանտ. եւ 4798 լեւ 70 սանտ.: